

## ԳՈՅՈՒԹՅԱՆ ԿՈՒՎՉ ԵՎ ՄԵՆՔ

Կյանքը գոյության անընդհատ դայլար է: Առանց այդ դայլարի՝ չկա կյանքում զարգացում, կատարելագործում:

Լինելով մասնիկը Բնության ազգերը ենթակա են գոյության կռվի հավերժական օրենքին եւ, ըստ այդմ՝ մշտապես դիտի դայլարեն իրենց աղբելու իրավունքի համար: Ազգերի մեջ, ինչողևս Բնության մեջ ընդհանրապես, իշխում է բնական ընտրության սկզբունքը. Բնությունն ընտրում է ուժեղներին, եւ ազգերը դատապարտված են ուժով նվաճելու աղբելու սեփական իրավունքը իրենց հոգու, մտի եւ բազկի բովանդակ ուժով:

Եվ այդ «փորձությունում» իրեւ մարդկային տեսակ՝ մեմ կարող ենք ինչողևս հավերժել, այնուևս էլ վերանալ, կախված մեր սեփական ինքնության հանդեղ հավատարմությունից եւ անընդհատ զարգանալու ունակությունից:

Այն ազգերը, որոնք ճանաչում են Բնության օրենքներն ու օրինաչափությունները եւ գործում են դրանց համապատասխան, առավել կենսունակ ու նրգունակ են գոյության դայլարում: Եվ յուրաքանչյուր ազգ, որ ձգտում է ինքնահավիտենականացման, փորձում է որակապես ու բանակապես գերազանցել մյուսներին: Լավ է դա, թե վաս, այդունք է թելադրում Բնությունը, եւ բոլոր փորձերը՝ սրբագրելու այն, դատապարտված են ձախողման:

Միաժամանակ, սակայն, սեփական բնատարածից ավելիին ձգտելը (ծավալադաշտություն) եւ սեփական բարերը ուրիշներին դարձադրելը եւս հակարնական են, բանզի խաթարում են տիրապետող ազգի նկարագիրը, որով ստառնում նրա գոյությանը:

Այսդիսով, ամեն ազգ ինքն է կերտում իր ճակատագիրը. կերտում՝ անցյալի հիշողությամբ, աղագայի հաստատում հավատով եւ օրվա հարատել դայլարով, միաժամանակ: Եվ երբ մեռնում է ազգի մեջ ինքնահավիտենականացման կամքը, վերջինս ենթակա բնական ընտրությանը, դադարում

Է արեւի տակ տեղ գրադեցնելուց, զիջելով այն առավել ուժեղներին:

Հավատարիմ մնա՞նք մեր եռությանը եւ գործե՛նք ժամանակի ոգուն համընթաց, որպեսզի այս աշխարհում մեր առաժելությանն արժանի տեղ ունենանք:

## «ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԲԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ *Դրան Տեր-Արքահամյան*

Հաճախ են կրկնում, թե մենք հայերս, ինագույն մշակույթ ունեցող եւ դարերի ընթացքում համանարդկային արժեքներ ստեղծած ազգ ենք: Հաճախ կրկնում ենք, բայց, անկեղծ ասած, նույնան հաճախ էլ թերահավատորեն կամ բարդույթավորված ենք վերաբերվում այս մասին: Հետաքրի կլիներ դարձել, թե որոնք են հայկական դատական եւ մշակութային այն արժեքները, որ ունեն համաշխարհային արժեք, իսկ որոնք զուտ տեղական: Այսպիսի դիմարկումը կվերացներ նաեւ այն անորոշությունը, որ առկա է այս հարցադրման դատասխանի ժուրգ եւ որը հանդիսանում է մեր բարդույթավորման դատաշներից մեկը: Բացի այդ, սա թույլ կտար նորովի նայել մեր դատմության շատ փաստերի վրա, գտնել դրանց մեջ նոր երանգավորումներ որոշակիորեն թարմացնելով նաեւ մեր դատմության ընդհանուր ավանդական հայեցակարգը: Դա միաժամանակ թույլ կտա խուսափել եւ ազգային կեղծ սնափառությունից, եւ նույնան տաշ ու հիվանդագին հիմքեր ունեցող ազգային թերարժեքությունից:

Անծույթ, այս ամենը ենթադրում է խոր ուսումնասիրություն եւ չի կարող ամփոփվել ամսագրային հոդվածի սահմաններում: Այդ դատձառով՝ մենք առաջն կսահմանավակվենք միայն մեկ օրինակի դիմարկմամբ:

\* \* \*

Հայոց դատմության բազմաթիվ դրվագներից այստեղ կանգ կառնենք 451թ. «Հայոց դատերազմի» եւ Ավարայրի ծակատամարտի վրա: Ի՞նչ գիտենք մենք այդ մասին: Խոսքը ոչ թե փաստագրական կողմի, այլ այդ դայլարի արժեքի ու նշանակության մասին է: Գիտենք, որ դա դայլար էր հավատի եւ ինքնության դահլիճանման համար, որով 451թ. շարժումն

ունի իր տեղը եւ դերը մեր ղատմության մեջ: Սակայն այդքանը բավարար է միայն տեղական զուտ հայկական նշանակություն ունենալու համար:

Բայց հետաքրիր է, որ մեր նախնիները ըստ երեւութին բնազդորեն զգում էին, որ 451թ. շարժումն ունի նաև իր մեջ թափնակած ավելի նեծ եւ ընդհանուր խորհուրդ, եւ այդ ղատճառով է թերեւս, որ ազգային ղայֆարի բազմաթիվ դրվագներից սրբացվեց առաջին հերթին հենց Ավարայրը: Իրոք ազատագրական ղայֆարի բազմաթիվ այլ հերոսական դրվագներ կարող ենք գտնել հայոց ղատմության մեջ, սակայն ինչո՞ւ հենց 451թ. դարձավ մի տեսակ խորհրդանիւս, այլ ոչ, ասենք, 481-84թ. շարժումը (այն դեմքում, երբ վերջինս բաղադրականաբես ավելի հաջող ավարտ ունեցավ), ինչո՞ւ Ավարայրի ճակատամարտը, այլ ոչ, ասենք, Ներւիապատինը կամ հայոց զորի հաղթանակով ավարտված այլ ճակատամարտը: Զարմանալի չէ արդյո՞ւն, որ դարերի ընթացքում մի ժողովրդի համար իր ղատմության ամենասրբացված ու ամենաճանաչված ճակատամարտը մնաց այն, որի արդյունքը, եթե ոչ ղարտություն էր (դրա մասին, ինչպես հայտնի է, թե՛ վեճեր են ընթացել), աղա առնվազն՝ բաղադրական անհաջողություն եւ ազատագրական ղայֆարի ճախողում: Այս բոլոր հարցերը իրենց լուծումը չեն ստանում, եթե տեսնենք այս իրադարձությունների միայն տեղական նշանակությունը, դրանց բացառությունը միայն ազգային-ազատագրական ղայֆարի մողելի ցըանակներում: Ուրեմն դեմք է փնտել 451թ. ավելի ընդհանրական բաղադրական եւ ունիվերսալ «ուտերձը»:

Վերիիշենք դեմքերի ընթացքի մի մասը: Պարսից արքան հայերին առաջարկում էր, ավելի ստուգ՝ որպես ժիրակալ հրամայում էր կրոնափոխություն: Յայերը մերժում են ենթարկվել արքայի հրամանին եւ իիմնավորում են իրենց այս մերժումը հատուկ նամակով ուղղված ղարսից թագավորին: Մեզ համար կարեւորագույն ղահը այստեղ այդ մերժման հիմնավորումն է եւ փաստարկումը: Յայերը չեն ժխտում Յազկերտ թագավորի ժիրակալ լինելու հանգամանքը

Եւ իրավունքը: Եթե դա լիներ այդպես, աղա գործ կունենայինք սովորական բաղաբական աղստանքության հետ, որի դեմքում մերժումը կլիներ սուկ հետեւանք բաղաբական անհնազանդության: Ամենեւին չանտեսելով խնդրի բաղաբական ասդեկտը այդուհանդերձ Յազկերտին ուղղված հայկական դատախանում մենք տեսնում ենք, որ արքայի իշխանական իրավունքը եւ նրա իրամաններին ենթարկվելու անհրաժեշտությունը բնակ էլ չեն ժխտվում: Սակայն ժեռավում է, որ արքայական իշխանության իրավասություններն ունեն իրենց սահմանը: Այդ իշխանությունը չի կարող տարածվել հոգեւոր եւ մասվոր ոլորտների, ի մասնավորի՝ եւ դավանանքի խնդիրների վրա:

Ահա այստեղ է, որ կատարվում է մի կատարյալ հեղափոխություն եւ կատարյալ խզում: Սա խզում է Քին Արեւելիի հետ, ուր ժիրակալի իշխանությունը տարածվում էր իր հղատակների ողջ, այդ քիում եւ ներին կյանքի վրա: Սա «խղճի ազատության» եւ մարդկային անհատի ու նաեւ ամբողջ մի ազգի ներին հոգեւոր աշխարհի ազատության սկզբունքի ձեւակերպման ամենափայլուն դրսեռումներից է համաշխարհային դատմության մեջ: Ընդ որում այստեղ խոսք «խղճի ազատության» սկզբունքի նախնական եւ շատ առումներով ավելի խորքային ձեւակերպման մասին է՝ հաշվի առնելով, որ այսօր այդ եզրը հաճախ իմաստագրկվում եւ գրեհկացվում է:

Այս խզումը ունի բաղաբակրթական եւ համամարդկային նշանակություն: Քաղաբակրթական առումով սա, դայմանականորեն ասած, «Եվրոպական արժեքների» հումքու եւ դեմք է ասել առաջին ձեւակերպումներից մեկն էր դատմության մեջ, եւ այդ առումով, ինչորևս ասացինք, խզում էր Քին Արեւելիի հետ:

Անկասկած, նման «հեղափոխությունը» ուներ նաեւ քիստնեական հիմքեր (բայց դեմք է ենթադրել, որ հիմքերը կային նաեւ հայոց դատմության եւ բաղաբակրթության նախարիստնեական շրջանի զարգացման մեջ), ու դարձ է նաեւ, որ այլ դետությունների մեջ առաջինը քիստնեությունն ընդունելը հայերին ինքնին դնում է

«ԵՎՐՈՊԱԿԱՆ» բաղաբակրության հիմնադիրների շարում:  
Սակայն մեր խնդրի տեսակետից ավելի կարեւոր կարելի է  
համարել «ներքին աշխարհի ազատության» թեզի այն  
գործնական բացահայտումը, որ ցուցաբերում է 451թ.  
շարժումը:

Իհարկե, դեմք է նույն, որ մարդու հոգեւոր աշխարհի  
ներքին ազատության գաղափարը նոր չէ. փիլիսոփայության  
մեջ այն արտահայտվել էր վաղուց: Սակայն եզակի է ամրող  
մի ազգի կողմից այդ սկզբունքով իր դայլարը հիմնավորելու  
հանգամանքը, որը տեղի ունեցավ մեր դեմքում: Անոււտք,  
451թ. դայլարը, այդ թվում նաեւ նրա համամարդկային  
նույնակությունը կարող է ունենալ նաեւ այլ կողմեր,  
սակայն մեր կարծիքով այս դաիր կարեւորագույնն է  
բաղաբակրթական առումով: Ազգային դայլարը,  
հիմնավորված բնազանցական մարդու հոգեւոր  
անկախության, «խողճի ազատության» բարձր  
սկզբունքներով, վերածում է այդ դայլարը հանուն  
համամարդկային այն արժեների դայլարի, որոնք այժմ  
ընդունված է կոչել «ԵՎՐՈՊԱԿԱՆ»:

Այժմ նաեւ ավելի դարձ է դառնում, թե ինչու այդ  
ժամանակվա դեմքերը սրբացվեցին սերունդների կողմից  
եւ դարձան հայկական ազգային դայլարի յուրաքանչյուր  
գործողության յուրահատուկ նախաժիղ, որի վրա հղում էր  
կատարվում ամեն անգամ, երբ անհրաժեշտություն էր  
զգացվում ազգային դայլարի այս կամ այն փուլի  
հիմնավորման: Ավելի դարձ է դառնում նաեւ, թե ինչու մի  
ճակատամարտ, որի անմիջական արդյունքը եղավ  
բաղաբական դայլարի դարտությունը, դարձավ ազգի  
դամության մեջ ամենահիշատակվող եւ սրբացված մի  
ճակատամարտ:

Խնդիրն այն է, որ այս դեմքերը իրենց մեջ կրում են  
ունիվերսալ ուղերձ բոլոր ժամանակներին, եւ նրանց  
նույնակությունը չի կարող սահմանափակվել միայն իրենց  
ժամանակով: Այդ դեմքերը նաեւ խորհրդանշում են հայ  
ինքնության զատումը Յին Արեւելից, բաղաբակրթական  
սեփական ուղու հեղափոխական ընտրությունը,

ընտրություն, որն ունեցավ «ռազմավարական բնույթ» եւ երեք չդավաճանվեց: Սա էր, որ բնազդորեն զգացվում էր մեր նախնիների կողմից եւ որը, սակայն, այնուան էլ չհ գիտակցվում մեր ժամանակներում, երբ հոգեւորը շատ հաճախ ստորադասվում է բաղաբականին կամ սնտեսականին, իսկ ներփին նարդը արտաքին հանգամաններին:

Ազգի եւ մարդու ներփին աշխարհը, հոգեւոր կյանքը, բարոյական ընտրության իրավունքը՝ ազատ են եւ ինքնավար. սա՛ է «Քայոց դատերազմի» եւ Ավարայրի իրական բաղաբակրական արժեքը՝ ուղերձը բոլոր ժամանակներին: Դա է, որ դարձնում է մեր դատմության այս դրվագը համամարդկային նշանակություն ունեցող, բանի որ այն աննախադեմ է առնվազն իր ժամանակի համար:

**ԱՄՆ «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ»  
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ  
ԹՈՒՐՖԻԱՆ  
(ԴՐՈՒՅԹՆԵՐ)  
*Ուլքեն Սաֆրասյան***

«Ամերիկյան գերիշխանությունն է խաղաղության  
եւ միջազգային իրավակարգի դատապահության  
միակ հուսալի միջոցը»:  
*Է. Լատվակ*

«Ամերիկայի համաշխարհային գերիշխանությունը  
դահլիճանելու համար որոշիչ նօանակություն  
կունենա այն,  
թե ինչո՞ւ է Սիացյալ Նահանգները կառավարում եւ  
օգտագործում եվրասիական խաղատախտակի հիմնական  
խաղացողներին»:  
*Զ. Բժեզինսկի*

1. Մեր օրերում ԱՄՆ-ի կողմից միջազգային բաղադրականության ոլորտում որդեգրած ռազմավարության կարեւորագույն հիմնադրույթները կարելի է հանառոտագրել հետևյալ կերպ.
  - ν ԱՄՆ-ը դիմի իշխի աշխարհում.
  - ν Դա երջանկություն է բերում աշխարհին.
  - ν Այլ երկրները կարեւորվում են այնքանով, որքանով ծառայում կամ խոչընդոտում են ամերիկյան ծրագրերի իրականացմանը:

2. Թուրքիան, լինելով կարեւոր եվրասիական դեմություն, դասվում է այն երկրների շարքին, որոնց վերադափուլում է որոշակի դերակատարություն այդ ռազմավարությունում: Ընդ որում, ինչո՞ւ ցույց է տալիս

փորձը, այդ դերակատարության իրականացման կոնկրետ ձեւերը ենթակա են փոփոխման կախված ամերիկյան բաղաբականության տվյալ ժամանակաշրջանի առաջնայնություններից:

3. Ամերիկյան «համամոլորակային» բաղաբականության առաջին փուլը ընդգրկում է 20-րդ դարի առաջին կեսը: Այդ շրջանում, երբ ամերիկյան գերիշխանության գաղափարները դեռևս հստակ ձեւակերպում չեն ստացել, սակայն եւ արդեն ազդարարել էին իրենց ծնունդը նախագահ Վ. Վիլսոնի Առաջին աշխարհամարտից հետո նոր համաշխարհային իրավակարգի ստեղծումը նախատեսող ծրագրով, ԱՄՆ-ը գործում էր հիմնականում Արեւմուտքի միասնական ռազմավարության շրջանակներում:

4. Այդ շրջանում Թուրքիային վերադափող դերի մասին դասկերացում է տալիս «Անտանտի դլանը», որը համաձայնեցվել է Անտանտի առաջատար երկրների միջեւ 1917 թվականի վերջերին եւ նրանց անունից հրադարակվել է նախագահ Վ. Վիլսոնի կողմից: Դամաձայն այդ դլանի, Թուրքիային հնարավորություն էր տրվելու Մեծ Բրիտանիայի հետ համատեղ իր գերիշխանությունը հաստատել Կովկասում եւ միայնակ Կենտրոնական Ասիայում: Այստիսով, Արեւմուտքը, հաշվի առնելով Օսմանյան Թուրքիայի դանքուրիստական նկրտումները, փորձում էր օգտագործել դրանք Ռուսական կայսրության տրոհումը կառավարելի դարձնելու նղատակով: Սակայն Ռուսաստանում բոլցեւիկյան հեղափոխության, իսկ Թուրքիայում թեմալական շարժման հաղթանակներից հետո այդ ծրագիրը կորցրեց իր նշանակությունը:

5. «Սառը դատերազմի» տարիներին, երբ ձեւավորվեցին երկու հզոր հակամարտող ռազմաբաղաբական եւ գաղափարական խմբավորումներ, ԱՄՆ-ը միանձնյա ստանձնեց նրանցից մեկի՝ «Արեւմուտքի» ղեկավարությունը: Այդ շրջանում առաջնային նշանակություն ստացավ հակադիր խմբավորման «Արեւելքի» համակողմանի «զսուման» եւ «բայրայման» խնդիրը:

6. Թուրքիային ԱՄՆ-ի կողմից վերադափեց «զստման» ռազմավարության իրականացման ռազմական ոլորտի առաջամարտիկի դերակատարությունը: «Թայֆայման» ռազմավարության ոլորտում Թուրքիայի դերակատարությունը անհամեմատ ավելի համեստ էր եւ սահմանափակվում էր հակադիր խնբավորման իշխանության տակ գտնվող թյուրքալեզու ժողովուրդների շրջանում գաղտնի բայցայիշ գործունեությանք: Այստիսով, Թուրքիային հատուկ դանքյուրիշտական նկրտումների օգտագործումը այս փուլում մղվեց երկրորդ դլան:

7. ԽՍՀՄ եւ համադատասխանաբար «Արեւելյան» խմբավորման փլուզումից հետո ԱՄՆ-ը, մնալով աշխարհի միակ գերտերությունը, ստանձնեց այդ փլուզման գործընթացը եւ նրա հետեւանմների գլխավոր կառավարողի եւ համակարգողի դերը:

8. Այդ նորագույն եւ հետեւելով արդեն գոյություն ունեցող ստերեոտիպերին ԱՄՆ-ը սկզբում փորձ արեց օգտագործել Թուրքիայի դանքյուրիշտական նկրտումները, համադատասխանեցնելով դրանի ժամանակի ոգուն: ԱՄՆ-ում առաջ բաւցեց «թուրքական մողելի» կոնցեմտը, որը հնարավորություն էր ստեղծում Թուրքիայի համար իր գերակայությունը հաստատել Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու դեսությունների եւ Աղրբեջանի վրա: Սակայն նրա վրա հիմնված Թուրքիայի բաղադրականությունը դաշտվեց անհաջողությանք:

9. ԱՄՆ հաջորդ մղումն էր օգտագործել Թուրքիայի ռազմական ներուժը Բալկանները եւ Մերձավոր Արեւելքը «հնազանդեցնելու» նորագույն պատճենը: Այս խնդիրը, ի տարբերություն առաջինի, Թուրքիան կատարեց հաջողությամբ, ինչի համար «դարգեւատրվեց» նոր աշխարհաբաշխական դայնաներում դահլիճնելով ԱՄՆ «ստրատեգիական դաշնակցի» կարգավիճակը դրանից բխող բոլոր առավելություններով:

10. 2001 թվականի սեպտեմբերից սկսվում է ամերիկյան «համամոլորակային» ռազմավարության նոր փուլը ակնհայտ համաշխարհային գերիշխանության

հաստաման փուլը: Այդ նղատակադրումը հիմնվում է աշխարհի մնացած բոլոր դետությունների նկատմամբ ԱՄՆ բացահայտ ռազմական (ինչպես ռազմատեխնիկական, այնպես էլ ռազմամարտավարական) առավելության վրա, ինչի աղացույցներն են աֆղանական եւ 2-րդ իրավյան դատրազմները:

11. Միաժամանակ ԱՄՆ-ում սկսվում են այդ նոր նղատակադրումը հիմնավորող ռազմավարության ձեւակերպման ածխատամնները, որոնց ընթացքում վերագնահատվում են նախկինում ախտոնաներ հաճարվող որու մոտեցումներ, ի հայտ են գալիս նոր կոնցելյուսներ: Այդ նոր մոտեցումները առաջին անգամ հաճակարգված արտահայտում ստացան 2002 թվականի սեպտեմբերին հրադարակված Ազգային անվտանգության նոր հայցակարգում:

12. Նոր ռազմավարության ձեւակերպման գործընթացը դեռևս ավարտված չէ, եւ այսօր կարելի է միայն ընդհանուր դատկերացում կազմել նրա հիմնական միտումների մասին: Մեր կարծիքով, այդ միտումները հետևյալն են.

Վ ԱՄՆ բաղադրականության մեջ նկատվում է ուժի կիրառման, ինչպես նաև նրա կիրառման սղանալիքի (այսպես կոչված «կանխարգելող հարվածների» տեսքով) տեսակարար կօրի աճ.

Վ Տեղի է ունենում ամերիկյան ռազմական հենակետերի եւ գինված ուժերի տեղադրման աշխարհագրության ընդլայնում.

Վ Փորձ է արվում անցում կատարել առանձին ռեգիոնների «խաղաղեցնան» բաղադրականությունից նրանց «վերածեման» բաղադրականությանը.

Վ Պակասում է ՆԱՏՕ-ի, ինչպես նաև ԱՄՆ մի շարք «ավանդական» դաշնակիցների նշանակությունը ամերիկյան համաշխարհային ռազմավարությունում, եւ վերանայվում է «ռազմավարական դաշնակից» հասկացողությունը.

Վ Ընտրվում են նոր ավելի «հնագանդ» դաշնակիցներ, աշխատանքներ են տարվում նոր ռազմական

Եւ բաղաբական խմբավորումների ստեղծման ուղղությամբ, իհարկե, ԱՄՍ անմիջական ղեկավարությամբ.

Վ ԱՄՍ բաղաբականությունը ստանում է ընդգծված հակասական բնույթ:

Անտարակույս, ղեռես միանշանակ չէ, թե վերը նշված նոր երեւույթներից ու միտումներից որոնք կղահղանվեն ու կհզորանան եւ որոնք կանհետանան ու կփոխարինվեն նորերով:

13. Այդ գործընթացները չեն օրջանցում նաև Թուրքիան: Վերջին երկու տարիներին թուրք-ամերիկյան հարաբերություններում տեղի ունեցած մի ժարք իրադարձություններ, որոնք անհնարին էին ոչ վաղ անցյալում, վկայում են, որ ԱՄՍ-ը լրջորեն վերագնահատում է Թուրքիային վերաբահվող դերակատարությունը իր համաշխարհային ռազմավարությունում:

14. Կարեւորագույն եզրակացությունը, որին հնարավոր է հանգել ներկա փուլում, դա, ըստ մեզ, ԱՄՍ հրաժարումն է դիմարկել Թուրքիան որպես ռազմավարական դաշնակից դրանից բխող բոլոր հետեւանքներով:

15. Սակայն ակնհայս է, որ Թուրքիան իր ռազմական հզոր ներուժով եւ աճող հավակնությամբ, այն երկիրը չէ, որին կարելի է թողնել գործել հնֆնուրույն: Կարելի է սղասել, որ մոտ աղագայում Թուրքիայի դերակատարությունը ԱՄՍ համաշխարհային բաղաբականության մեջ կստանա նոր կոնցեմտուալ ձեւակերպում:

## ԹՈՒՐՔ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՍԻՆ *Սեւակ Սարուխանյան*

Թեեւ անցել է ընդամենը 12 տարի մադրիդյան կոնֆերանսից, որից հետո Թուրքիան ամբողջական դիվանագիտական հարաբերություններ հաստատեց իսրայելի հետ, սակայն ամենայն վստահությամբ կարելի է ասել, որ թուրք-իսրայելական տարածաշրջանային դաշինության կայացել եւ ամրացել է: Թուրք-իսրայելական մերձեցման ամենաակտիվ շրջանն ընկնում է 90-ականների կեսերին, երբ սահմանվեցին միջդետական համագործակցության հիմնական ուղղությունները: Սուրեւ փորձենք նկարագրել թուրք-իսրայելական համագործակցության զարգացման էվոլյուցիան, որն արդեն 1996-ին Թուրքիայի նախագահին թույլ սկեց երկու երկրների միջեւ միջդետական համագործակցությունը բնութագրել ուրեմն «ստատեգիական գործընկերություն»: Որպես կարեւոր գործոն հակիրճ կանորադառնամն նաև «Թուրքիա-իրեաներ» հարաբերությունների դասմությանը:

Խոսելով «Թուրքիա-իրեաներ» հարաբերությունների մասին դեմք է նշել, որ թուրք բաղադրական եւ դետական գործիչները գրեթե միշտ էլ աչքի են ընկել իրեասիրությամբ: Դրեաների Թուրքիա թափանցումը հաճախ խրախուսվել է երկրի դետական այրերի կողմից: Այս ժեսակետից համարես աչքի էր ընկնում քեմալ Աթաթուրքը, որի անձնական եւ բաղադրական շրջապատի մի զգալի մասը կազմում էին իրեական ծագում ունեցող մտավորականները: Այս ավանդույթը գալիս է տակավին կայսրության ժամանակներից, երբ իրեաները առանց որեւէ արգելի ստանձնում էին այնպիսի դետական եւ վարչական դաշտներ, որ նույնիսկ հնարավորություն էին ստանում ազդել երկրի բաղադրական կյանքի վրա: Ինչդես նշում է

սովետական մասնագետ Գորդեևսկիհն, հրեական ծագում ունեցող մահմեդականների դյոննե աղանդը (հիմնված 1666-ին Սալինիկով) ղերթական էր, որ իրենց մեջ է դեմք փնտրել 1908 թվականի Երիտրուրբական հեղափոխության սկիզբը: Դատկանական է, որ դանթուրիզմի եւ քուրբական ազգայնականության ականավոր հիմնադիրներից Թերին Ալիքը ազգությամբ հրեա էր (իսկական անունը Մոհամետ Ալիք):

Չնայած վերը նշված բոլոր հանգամանքներին, հրեաների ժամակը Թուրքիայում սկսած 20-ական թվականներից, գնալով նվազում էր: Եթե 1927-ին Թուրքիայում ընակվում էր 82 հազար հրեա, առաջ 1935-ին արդեն 42 հազար: 1965 թվականի մարդահամարը, որը ազգային դատկանելությունը գրանցող վերջին միջոցառումն էր Թուրքիայի տարածում, երկրում գրանցեց 38,3 հազար հրեա, որոնցից ընդամենը 10.000-ն էր օգտվում մայրենի լեզվից:

Չենալ Աթաթուրքի մահից հետո, սակայն, հակահրեականությունը դառնում է քուրբական հասարակության կյանքի անբակտելի մաս, որը գնալով ավելի ու ավելի է լրացվում եւ գրգռվում իսրայելա-արաբական դատերազմների ժամանակ: Իսրայելի ստեղծումը եւ հզրացումը առավել ֆան անընդունելի էին տակավին դանիսլամիզմի հաղթանակը ակնկալող թուրք բաղաբական գործիչների համար, որոնք երազում էին իսլամիստական ազգերը հաճախճրող մեկ մեծ դետության ստեղծումը (իհարկե, Թուրքիայի ղեկավարությամբ): Մյուս կողմից իր դերն էր խաղում նաեւ հրեական կաղիտակի առող դերը երկրում, որը, ինչուս եւ հումական կաղիտալը, խուռա արգելիք էին հանդիսանում թուրք ազգային բուրժուազիայի դիրքերի ամրապնդման համար: 1955-ի Թուրքիայում բարձրացած հակահումական ալիքի ժամանակ երկրի բաղաբների մեծ մասում հումական խանութներից զատ հարձակումների են ենթարկվում նաեւ հրեաներին դատկանող ծեղնարկությունները եւ սինագոգները: 1970-ին Երբաֆանի կողմից ստեղծված թուրք իսլամիստների կուսակցությունը իր գաղափարախոսության հիմքում ուներ

հակասեմիտիզմի գաղափարը:

Հակասեմիտիզմի վերելիք Թուրքիայում շատ անցանկալի էր Միացյալ Նահանգների կառավարության համար, որն իւրայելի դետության ստեղծման դահից դատարաստակամություն էր հայտնել աջակցելու թուրքիւրայելական մերձեցմանը, ինչն ԱՄՆ-ը տեսնում էր որպես տարձաւրջանային խուռ դաշինի ստեղծման սկիզբ: ԱՄՆ-ի Թուրքիայի եւ իւրայելի մերձեցման ջանքերն իզուր չանցան եւ 1991-ին հաստատվեցին ոիվանագիտական հարաբերություններ Երկու Երկրների միջեւ: Ինչեւէ, չնայած «Թուրքիա-Իրան» հարաբերությունների հարուս դատությանը, 1991-ից իւրայելն ու Թուրքիան ստիռված էին գրոյից կառուցել իրենց հարաբերությունները:

### ***Թուրք-իւրայելական հարաբերությունների ժամանակակից ժաշանք***

Ինչուս անցած տասնամյակներում, այնուեւ էլ 1990-ականներին թուրք-իւրայելական մերձեցման հիմնական գաղափարախոսը Միացյալ Նահանգներն էր, որ դատարաստակամություն հայտնեց անգամ ֆինանսապես աջակցել այդ մերձեցմանը: 1994-ին, եթր Թուրքիայի առջեւ կանգնեց հանրապետության զինուժի արդիականացման անհրաժեշտությունը, Միացյալ Նահանգները հանդես եկավ թուրքական բանակի սղառազինությունը իւրայելում արդիականացնելու առաջարկով եւ անգամ դատարաստակամություն հայտնեց Թուրքիայի փոխարեն վճարել անհրաժեշտ ծախսերի 60 տոկոսը: Հատկանշական է, որ ԱՄՆ-ը առաջարկեց փակել ծախսերի 60 տոկոսը դայմանով, եթե սղառազինությունը նորացվի հենց իւրայելում, այլ ոչ թե մեկ այլ Երկրում:

1994-ին ԱՄՆ ակտիվ մասնակցությամբ կազմակերպվեց Թուրքիայի վարչադես Թանսու Թիլերի այցը իւրայել, որի ընթացքում Թուրքիայի վարչադեսը ներկայացրեց թուրք-իւրայելական համագործակցության ժօղուակների մասին իր դատկերացումները: Նրա կարծիքով համագործակցությունն ամենից արդյունավետ կլիներ

տեղերեկան, բարձր տեխնոլոգիաների, բեռնափոխադրման եւ ջրամատակարարման ոլորտներում: Տնտեսական տեսանկյունից հսկայելի համար կարեւորագույն նշանակություն ուներ Թուրքիայից հսկայել ջրամատակարարման կազմակերպման հարցը, որի մասին համաձայնագիրը ստորագրվեց միայն 2002-ի օգոստոսին:

Զիլերը Թել Ավիվում հսկայելից աջակցություն խնդրեց ահարեւկչության դեմ դայլարի գործում, ինչին հցակ Ռարինը ոփառնագիտության դատասխանեց, որ «հսկայելը Թուրքիային կաջակցի տվյալ հարցում, բայց կցանկանա դասիվ դեռ ունենալ բրդական դրդեմի լուծմանը» (նշենի, որ 1985-ին հսկայելի փոխարժեութնախարար Շամիրը դատաստակամություն էր հայտնել աջակցել Թուրքիային «ցանկացած տիրու ահարեւկչության, այդ թվում նաեւ հայկական տեռորի դեմ ննվող դայլարում»):

Թաճուու Զիլերի այցը հսկայել մեծ դեր խաղաց թուրքիայելական համագործակցության հետազա զարգացման համար: Զիլերի այցից հետո «Զերուսալեմ փոս» դարբերականը, իհմնվելով մերձավորաբեւելյան բաղաբականության վաշինգտոնյան ինստիտուտի վերլուծական թղթերի վրա, նշեց չորս իհմնական դաշտաներ, որոնի նղատակամղում են Թուրքիային մերձենալ հսկայելի հետ:

1. Իսրայելի եւ արաբների հարաբերությունների համեմատական բարելավումը վերացնում է հսկայելի հետ Թուրքիայի լայնածավալ համագործակցության անհնարինության միակ տեսական դաշտառը:

2. Արաբների դաշտանությունը դաղեստինյան իհմնահարցում չի տալիս Թուրքիային եւ ոչ մի տնտեսական ու դիվանագիտական դիվիդենտ:

3. Իսրայելի հետ Թուրքիայի մերձեցումը կմեղմացնի Անկարային ուղղված մեղադրանքները կաղված բրդական հարցի ռադիկալ լուծումների հետ:

4. ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիայի ռազմագաղաքական նշանակությունը Արեւմուտի համար նվազել է, ինչը դայմանավորում է ֆինանսական օգնության

նվազում: Այս բացը կարող են լրացնել հսրայելը եւ հրեական ժքաններն ընդհանրաբես:

1995-ի դեկտեմբերին Թուրքիայում կայացած հերթական խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տարան իսլամիստները, ինչի արդյունքում 1996-ին Թուրքիայի վաշչառես դարձավ Էրբանը: Վերետում արդեն ասվեց, որ Երբաֆանի կուսակցության գաղափարական հիմքերից էր հակասեն իշտիզմը, որը 1996-ին էլ չէր նվազել: Կուսակցության նախընտրական «Թուրքիայի վիճակի հսկական դատարանները» բրոցյուրը նրա հակահրեական կողմնորոշման վառ օրինակն էր: Բրոցյուրում Թուրքիայի դժբախտության հիմնական դատարաններ էին դիմվում «հսրայելի դետությունը եւ ԱՄՍ սիոնիստական բանկերը»: Սա եւ Երբաֆանի դաւոնական այցերը Թեհրան, իսլամաբաղ եւ Տրիոլի ավելի բան անհանգստացրին Վաշինգտոնին եւ Թել Ավիվին: 1996-ին «Զերուսալեմ փոս»-ի վերլուծաբան Բարի Բուրինը գրեց. «Իսլամիստներին սահմանափակող միակ գործոնը հանդիսանում է թուրքական բանակի հակամարտությունը նրանց հետ: Թուրքական բանակը ավելի շուրջ հեղափոխություն կկատարի, բայց թույլ չի տա իսլամիստական ռեժիմ Անկարայում»: Յեղափոխություն, ինչողևս գիտեմ, տեղի չունեցավ, սակայն արտաքին բաղաբականության կուրսի իրական փոփոխություն Երբաֆանը իր կարձաժամկետ կառավարման տարիներին չկարողացավ կատարել:

1996-ի փետրվարին Թել Ավիվում ստորագրվեց թուրքիսրայելական ռազմական համագործակցության մասին առաջին դայմանագիրը, որի լրիվ բովանդակությունը մինչ օրս հայտնի չէ: Այն սահմանում էր Երկու դետությունների գինած ուժերի, առաջին հերթին ռազմաօդային ուժերի համագործակցության իմանական ուղղությունները:

1996-ի մարտին սկսվեց Թուրքիայի նախագահ Ս.Դեմիրելի դաւոնական այցը Թել Ավիվ: Այցից առաջ Թուրքիայում հսրայելի դեսպան Ցվի Էլլելեզը թուրք լրագրողներին տված իր հարցազրույցում նշեց. «Մենք բնական դաշնակիցներ ենք, բանի որ հանդիսանում ենք

ժղովրդավարական եւ աշխարհիկ ղետություններ: Մենք աշխարհագրութեն մոտ ենք իրար, մեր ղետություններին սպառնում է ահաբեկչությունը: Այստեղ էլ առաջ են գալիս դաշտանության համանան դրոբլեններ»: Դեմիրելի այցը չսահմանափակվեց միայն դաշտնական ծրագրով: Նա այցելեց Երուսաղեմի հրեական հաճալսարան, որտեղ նրան հանձնեցին դաշտավոր դոկտորի կոչում եւ մասնակից եղավ Զեմալ Աթաթուրի անվան այգու բացման արարողությանը:

Այսի ժամանակ Երկու ղետությունների արտադին գործերի նախարարները ստորագրեցին թուրֆ-իսրայելական միջողետական առեւտրային համաձայնագիրը, որը նախատեսում էր «բոլոր տարիքային սահմանափակումների վերացում Երկու Երկրների միջեւ մինչեւ 2000 թվականը»: Նույն օրերին ստորագրվեցին նաև կաղիտալ ներդրումների դաշտանության, երկակի հարկման բացառման, տնտեսական եւ գիտական համագործակցության մասին դայմանագրեր: Իսրայելական կողմը կարեւորեց «Բարու-Ձեյիան» նավամուլի կառուցումը եւ այն միջնորդային դերը, որը խաղում է Թուրքիան Իսրայելի թյուրքական ղետությունների հետ հարաբերությունների զարգացման գործում:

1996-ին Դեմիրելի Թել Ավիվ կատարած այցը հսկայական նշանակություն ունեցավ թուրֆ-իսրայելական համագործակցության զարգացման գործում: Այն նախանձեց բոլոր այն ուղղությունները, որոնցով հետագայում զարգանալու էին հարաբերությունները Երկու ղետությունների միջեւ: Դենց Դեմիրելի այցից հետո ամերիկյան բաղադրական գործիչները եւ լրագրողները սկսեցին բացահայտ խոսել թուրֆ-իսրայելական ռազմավարական դաշինի մասին, որի հովանավոր եւ աջակից, իհարկե, նշվում էր Միացյալ Նահանգները:

1997-ի ապրիլին իսրայելական նոր կառավարության արտադին գործերի նախարար Դ.Լելին դաշտնական այց կատարեց Անկարա: Համեմատական է, որ այցից առաջ Թուրքիայի վարչադես Երբագանը հայտնել էր, որ ոչ մի

դեղում չի հանդիդի իշրայելի դաւտնյայի հետ: Սակայն Դեմիրելի եւ թուրքական բարձրագույն զինվորականության դահանջով հանդիդումը տեղի ունեցավ:

1997-ին տեղի ունեցավ նաեւ իշրայելի բանակի զինվոր ըսարի դեկավար Շահակի այցը Թուրքիա, որի ժամանակ բննարկվեցին 1996-ի օգոստոսին կնիված ռազմական համագործակցության երկրորդ համաձայնագրի իրագործման հիմնախնդիրները, հիմնականում Ֆ-4 «Ֆանտոմ» թուրքական ինքնաթիռների մոդեռնիզացիայի հարցերը:

1999-ին կայացավ իշրայելի վարչադես Էհուլ Բարափ դաւտնական այցը Անկարա. դա 1958-ին Բեն Գուրիոնի թուրքիա կատարած գաղտնի այցից հետո իշրայելի վարչադեսի երկրորդ այցն էր Անկարա: Այն բնորոշում էր միջողետական հարաբերությունների զերմության ասիժանը եւ մեծ արձագանի սացավ Արեւմուտքում:

Ընդամենը երկու տարի անց 2001-ին արդեն Արիել Շարոնը դաւտնական այց կատարեց Անկարա, որի ընթացքում բննարկվեցին հիմնականում տնտեսական համագործակցությանը նվիրված հարցեր: Դատկանական է, որ 2001-ին լրատվածիջոցները շատ մեծ ուշադրություն չդարձրին Շարոնի այցին, բանի որ թուրք-իշրայելական ռազմաստրատեգիական դաշինքը ոչ ոքի արդեն չէր զարմացնում:

2002 թվականն աչքի ընկավ օգոստոսին կնիված միջողետական դայմանագրով, որով Թուրքիան դարսավորվում էր իշրայելին 20 տարվա ընթացքում 50 միլիոն խմ ճաֆուր ջուր մատակարարել, ինչը կառահովի իշրայելի ջրի դահանջի 7 տոկոսը:

Ըստ դաւտնական տվյալների 2002 թվականին ապրանքաշաքանառությունը երկու դետությունների միջեւ գերազանցել է 1 մլրդ դոլարը:

Ներկայումս Թուրքիան եւ իշրայելը հանդիսանում են կարենուագույն ռազմաստրատեգիական դաշնակիցներ ոչ միայն Մերձավոր Արեւելքում: Այսօր Թուրքիան հետխորհրդային թյուրքալեզու հանրամետություններում

առաջ է տանում իշրայելական ժահերը, իսկ Իշրայելն, իր հերթին, օգտագործելով սեփական համայնքը ԱՄՆ-ում, էլ ավելի է ուժեղացնում Ամերիկայի թուրքական լոքրին:

Այս ամենն ուղղակիորեն առնչվում է Հայաստանի ժահերին, եւ մեր Երկիրը դեսf է հաշվի նստի այս փաստերի հետ թե՛ իր տարածաշրջանային բաղաբականությունը մշակելիս, թե՛ Ցեղասպանության միջազգային ճանաչման կուրսն իրականացնելիս:

## ՈՂԻՍԱՏԱՆ. ՎԵՐԱԴԱՐՁ ԴԵՊԻ ԱՇԽԱՐՉԱՔԱՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ

**Գագիկ Stev-Դարությունյան**

90-ականների կեսերին ռուսաստանյան վերլուծաբանների հետ զրոյցի ժամանակ արեւմյան խոշոր ֆաղաքագետներից մեկն արտահայտվեց այն ոգով, թե ռուսներին հարկ չկա խոսել աշխարհագաղաքան ծրագրերի մասին, եթե Ռուսաստանի բյուջեն ընդամենը 2 տասնյակ մլրդ դոլար է: Ասված էր փոքրիկ խիստ, բայց արդարացի: ԶԵ՝ nr «սառը դատերազմում» դարտվելուց եւ դրան հաջորդող հեղափոխական փոփոխություններից հետո կենսագործունեության բոլոր ոլորտներում Ռուսաստանը մտավ, իսկ ավելի ճիշտ գահավիժեց համակարգային բայցայնան փուլ: Այդ տարիներին շատերին թվաց, թե Ռուսաստանը ծնկի է բերվել, եւ այն այլեւս չի վերադառնա առաջատար տերությունների շարքը: Սակայն, ինչողես դա մեկ անգամ չէ, որ տեղի է ունեցել, այդ երկրի կարողությունները ավելի մեծ էին, քան ենթադրվում էր: Վերջին տարիներին Ռուսաստանում նկատվում է բոլոր, առաջին հերթին սննդեսական եւ ռազմական ոլորտներում իրավիճակի ըսկման հարածուն միտում:

### **Տնտեսության վերականգնում**

1991թ. հետո Ռուսաստանում տեղի ունեցած տնտեսական աղետի ծավալները ներկայացնելու համար բերենի մի բանի ժպաններ: ԽՍՀՄ դեւական բյուջեն նախավերակառուցման շրջանում 1985թ., կազմում էր շուրջ 400 մլրդ ռուբլի, իսկ 1998թ. Ռուսաստանի բյուջեն «կշռում» էր ընդամենը 20 մլրդ դոլար: Նկատեն, որ այսօր ինչողես փորձագետները, այնուես էլ շարքային բաղադրիչները միակարծիք են նրանում, որ 70-80-ականների ռուբլին իր գնողունակությամբ ոչ թե չէր զիջում,

այլ ժամով գերազանցում էր ամերիկյան դոլարին: Իհարկե, ներկայիս Ռուսաստանի Դաշնությունը նախկին ԽՍՀՄ սոսկ մի մասն է, սակայն ակներեւ է, որ խոսքը կարեւորագույն տնտեսական ցուցանիշի ավելի բան 20 անգամ ամերիկյան մասին է: Բնակչան է, որ այդուհի խղճուկ բյուջեով անհնար է իրականացնել ոչ միայն աշխարհագործական, այլև նահանգային մասշտաբի ծրագրեր:

Այս համատեսում ուշադրության է արժանի Ռուսաստանի 2004թ. դաշնային բյուջեն, որում Եկամուտները մոտ 510 մլրդ դոլարի ընդհանուր համախառն արտադրանի դայմաններում կազմում են շուրջ 90 մլրդ: Իհարկե, մարդկային ու բնական վիթխարի դաշտներ ունեցող Ռուսաստանի համար այս թվերն իրենց բացաձակ մեծությամբ չեն կարող որեւէ մեկի վրա տավորություն թողնել: Բայց անհրաժեշտ է հաշվի առնել, որ 1998թ. համեմատ Ռուսաստանի բյուջեն ավելացել է 4,5 անգամ: Ընդ որում, 3 տարի շարունակ կառավարությունը բյուջեն առաջարկում է դրոֆիցիտով, այսինքն ծախսերի նկատմամբ Եկամուտների հավելումով: Դաշորդ տարի դրոֆիցիտը դեմք է կազմի 3 մլրդ դոլար: Այս բոլորը վկայում են ռուսաստանյան տնտեսության աճի լավ տեմպերի մասին:

Բացի այդ, բյուջեում գետեղված են ռուսական հիմնական արտահանվող աղբանի նավթի գները. 1 բարելի համար 20 դոլար: Ի դեռ, բարելն այսօր արժե 26-28 դոլար, իսկ փորձագետների կանխատեսումներով չշեմք է իշնի 24-25 դոլարից: Ծրագրվում է ստեղծել նաեւ այսպես կոչված կայունացման ֆոնդ, որտեղ հավաքվելու են նավթի բարձր գների հաշվին ստացված դրամական միջոցները: Այդ գումարները օգտագործվելու են կենսաթոշակային բարեփոխումների իրագործման եւ ժողովրդագրական խնդիրների լուծման նորագույնությունում: Բյուջեի մյուս դրական կողմն այն է, որ արտադրի դարսի տարեկան մուծումների լարվածության դահն անցել է, այսինքն այդ ժիղությունը ծախսերը համադրասխանաբար նվազել են:

Ռուսաստանի տնտեսության զարգացման դրական

միտումների մասին են խոսում նաեւ այլ ցուցանիշներ: Օրինակ, ռուսաստանյան ֆոնդային ըուկայի կաղիտալացման մակարդակը (165-168 մլրդ դոլար) այսօր ավելի բարձր է, քան մի շարժ արեւմտաեւրոպական երկրներում: Նշենք թեկուզ Ֆինլանդիան, որին այդ ցուցանիշով Ռուսաստանը գերազանցել է 2 անգամ, իսկ Գերմանիայի համեմատ այն արդեն կազմում է նրա բառորդ մասը: Կարելի է նշել նաեւ ռուսաստանյան ֆոնդային ըուկայի բարձր մասնաբաժինը ընդհանուր համախառն արտադրանքում, որը կազմում է 43-45 տոկոս, ինչը հավասար է Գերմանիայի այդ նույն ցուցանիշին:

Դատուկ դեսք է նշել, որ մակրոտնտեսական ցուցանիշների բարելավումը, բնականաբար, համադրատասխանորեն արտացոլվել է ռուսաստանցիների կենսանակարդակի վրա: Բնակչության իրական եկամուտները վերջին 1,5 տարվա ընթացքում աճել են 14,6 տոկոսով, իսկ աշխատավարձերն այդ նույն ժամանակահատվածում ավելացել են 9,7 տոկոսով: Ռուսաստանի դետվիճակումի տվյալներով այս տարվա հունիսին միջին ամսական աշխատավարձը կազմել է 184,2 դոլար, որը 30 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա նույն ամսվա ցուցանիշին:

Այս ամենը հիմք հանդիսացավ, որմեսզի «Moody's» հեղինակավոր միջազգային ռեյթինգային գործակալությունը Ռուսաստանին «դրական ներդրումային վարկային ռեյթինգ» ընորիի: Հեղինակավոր ներդրումային ֆոնդերի կանոնադրությունը թույլ է տալիս ներդրումներ կատարել միայն նման վարկանիշ ունեցող երկրներում: Այսինքն դեսք է ստասել ներդրումների զգալի աճ Ռուսաստանում: Սակայն նշենք նաեւ, որ ռեյթինգային ոլորտում «Moody's»-ի հիմնական նրգակիցները «Standard&Poor's» եւ «Fitch» գործակալությունները, առայժմ չեն բարձրացնում ռուսաստանյան սնտեսությանը իրենց տվյալներում:

«Moody's» որոշումը հետևանք է այն իրողությունների, որ Ռուսաստանը, սկսած 1999թ., հետեւողականորեն բարելավում է իր սնտեսական ցուցանիշները: Օրինակ

«Moody s»-ի համար կարեւոր նշանակություն ունի այն հանգամանքը, որ Ռուսաստանի դարտֆերն այսօր կազմում են նրա տարեկան ընդհանուր եկամուտների 30 տոկոսը, մինչդեռ ճամփորդայի դարտֆեր կազմում են եկամուտների 150 տոկոսը: Այս տարվա ներդրումները Ռուսաստանում կազմել են 7,8 մլրդ դոլար, ինչն էամես շատ է նախկին տարիների համեմատ:

Միենովն ժամանակ, ինչողես հայտնի է, Ռուսաստանի սնտեսական հաջողությունները զգալիորեն կախված են նավթի արտահանումից (ներկայումս Ռուսաստանը եւ Սառույան Արաբիան հանդիսանում են աշխարհում նավթի հիմնական մատակարարողները): Եներգետիկ ոլորտում ունեցած հաջողությունները կանխորոշում են Ռուսաստանի աշխարհատնտեսական էվոլյուսիան ոչ միայն ԱՊՀ երկրներում, այլև Արևելյան Եվրոպայում: Տեղին է հիշել նաեւ, որ ԽՍՀՄ սնտեսական տաղալումը որոշ վերլուծաբաններ կաղում են այն փաստի հետ, որ ԱՄՆ ջաներով 80-ականների կեսերին ՕՊԵԿ-ը էամես (ավելի քան 40 տոկոսով) իջեցրեց նավթի գները: Դատելով որոշ հաղորդագրություններից նման մի սցենար փորձ է արվում իրականացնել եւ այսօր:

Ինչողես հայտնի է, «Exxon Mobil» նավթային ընկերությունը բանակցություններ էր վարում Միխայիլ Խոդորկովսկու կողմից վերահսկվող խուռագույն «ՇՈՒՌԻՌՈՎՄԻՑՖ»-ի բաժնետոմսերի 40 տոկոսի գնման կաղակցությամբ: Եթե այդ դյանները իրագործվեին, աղա Ռուսաստանի կախվածությունը ԱՄՆ-ից զգայի կմեծանար:

Այս հարցի կարեւորությունը ԱՄՆ-ի համար ավելի քան մեծ էր: Բավական է նշել, որ «Exxon Mobil»-«ՇՈՒՌԻՌՈՎՄԻՑՖ» հարաբերությունները սեղմտեմբերի սկզբին Վ. Պուտին-Զ. Բուտս ավագ, Յ. Զիսինջեր եւ Զ. Բժեզինսկի բանակցությունների հիմնական թեմաներից են եղել: Բնականարար, ռուսները հասկանում էին հարցի նշանակությունը եւ այդ նախագծի դեմ դայլքար էին սկսել: Քանի առաջարկական է, որ թեեւ Պուտինն իր բոլոր հարցագրույցներում «Exxon Mobil»-«ՇՈՒՌԻՌՈՎՄԻՑՖ»

Տնտեսական հարաբերությունները դիտարկում էր որպես Ռուսաստանի համար խիստ ձեռնտու ներդրումային ծրագիր, սակայն իրականում, ինչու գիտենք, Միխայիլ Խոդորկովսկին ձերբակալված է, կալանքի տակ է նաև «ՇՈՏ»-ի բաժնետոմսերի ավելի բան 40 տոկոսը:

Զարմանալի չէ, որ բոլոր վերլուծաբանները փաստուն Վլադիմիր Պուտինի գործունեության հետ են կաղում Ռուսաստանի տնտեսության վերակենդանացումը: Ըստ որում, մասնանշում են մի շարք արճատական խնդիրներ, որոնք նա կարողացել է լուծել իր նախագահության առաջին ժամկետում: Դա ուղաճիգ իշխանության ամրապնդումն է, միջազգային ֆինանսական կազմակերպությունների ծառայություններից հրաժարումը, մտածված ներին եւ արտաֆին ֆադաֆականությունը եւ շատ ուրիշ բաներ: Նրա գործունեության կարեւոր բաղադրիչներից է կադրային ֆադաֆականությունը այսպէս կոչված «Պուտինի դոկտրինան», որի իրագործման արդյունքում հատուկ ծառայությունների ու զինվորականության ներկայացուցիչները մարզային վարչակազմներում զբաղեցրին ղաւանների 70 տոկոսը, կառավարությունում 1/3-ը, իսկ անբողջությամբ նրանք կազմում են ղետական վերնախավի բառորդ մասը: Եթեում է, որ նման մոտեցումն իրեն արդարացնում է, եւ ստայակազմը վաս չի տանում ղետական ծառայողի դժվարին լուծը: Եվ բնական է, որ այդ կադրերը առաջնային են համարելու ազգային անվտանգության ու ռազմական շինարարության խնդիրները:

### ***Նոր ռազմական դոկտրինա***

Այս տարվա հոկտեմբերին նախագահ Պուտինի, ղաւանականության նախարար Իվանովի եւ զինվորական ու բադաֆական վերնախավի այլ ներկայացուցիչների մասնակցությամբ կայացած խորհրդակցությունում շարադրվեցին ՌԴ զինված ուժերի արդիականացման հայցակարգի եւ նոր ռազմական դոկտրինայի հիմունքները:

Վլադիմիր Պուտինը ծանուցեց, որ բանակի թվակազմի կրծառումն ընդհանուր առմանը ավարտվել է ու հասցվել 1 միլիոնի: «Բավական է», - միտքն այսպես եզրափակեց նախագահը. վերջին 10 եւ ավելի տարիներին ռուսական բանակը կրծառվել է ավելի քան 2 անգամ, եւ ներկայիս ճակարդակը, ռազմականացրության կարծիքով, համադաշտասխանում է անհրաժեշտ դաշտանական ծավալներին: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ Ռուսաստանի զինված ուժերը դուրս են եկել Խորհրդային Միության փլուզումից հետո բանակն ու նավատորնը տեղային վիճակի հասցած շարունակական բարեփոխումների շրջանից:

Սակայն խորհրդակցության հիմնական թեման միջուկային ուժերի մարտական դատարանականության վերաբերյալ էր: «Ռուսաստանն իր տրամադրության տակ ունի ցամաքային տեղակայման ստրատեգիական հրթիռների զգալի դաշտներ... խոսն ամենաահեղ հրթիռների մասին է, որոնք մեզ մոտ տասնյակներով են մի քանի հարյուր մարտագլխիկներով (նկատի են ունեցվում ձՆ-100 եւ ԾԶՁՁՂ ստրատեգիական հրթիռները)... Ցանկացած հակահրթիռային դաշտանության համակարգեր հաղթահարելու նրանց հնարավորությունները մրցակցությունից դուրս են», - հայտարարել է Պուտինը: Ինչու տղանում են փորձագետները, ՈՂ նախագահի այս հայտարարությունն «ուղղված էր ԱՄՆ ուժերին, որոնք հասան ՀՕՊ դայմանագրից իրենց երկրի դուրսբերմանը եւ մօակում են հենց այդդիսի համակարգեր»:

Միաժամանակ, տեսաբանների եւ վերլուծաբանների շրջանում ամենամեծ ռեզոնանսն առաջացրեց Սերգեյ Իվանովի հայտարարությունն այն մասին, թե «Ժամանակակից արտաքին սովահնալիքների առանձնահատկությունները ռուսական զինված ուժերից դահանջում են լուծել բազմաբնույթ խնդիրներ աշխարհի տարբեր տարածաշրջաններում: Մենք չենք կարող բացառել նաեւ դրեվենտիվ նորագույն ուժի կիրառումը, եթե դա դահանջեն Ռուսաստանի շահերը կամ նրա դաշնակցային

ղարտականությունները»: Նախարարը չփորձեց ղարզաբանել, թե դրա տակ ենթադրվո՞ւմ է, արդյոք, միջուկային դրեվենտիվ հարված, սակայն հարկ չկա տարակուտելու, թե ոռու գինվորականները դիտարկում են նաեւ այդդիսի սցենարը:

Նկատեմ, որ գինված ուժերի նոր դրկտրինայի երեւան գալը ռազմական շինարարության ոլորտում Կրեմլի ձեռնարկած հետեւողական բայլերի տրամաբանական օնակն է: Օրինակ, ավելի վաղ հրամարակվել էր նախագահի հրամանագիրը Նովոռոսիյսկում Սեւծովյան նավատորմի նոր հենակայան ստեղծելու մասին: Դաստավել էր նաեւ «Ազովյան-Սեւծովյան տարածաշրջանում դիվանագիտական եւ ռազմական խնդիրների լուծմանն ուղղված նախարարությունների ու գերատեսչությունների համագործակցման ծրագիրը»: Այդ ծրագիրը գաղտնի բնույթի է եւ կապված է ոչ միայն Նովոռոսիյսկում, այլեւ Ազովի եւ Սեւծովերի ափամերձ գոտիների բնակավայրերում Տագանրոգում, Տուլափսեռում, Գելենջիկում եւ այլուր ռազմական ինֆրակառույցների կազմակերպման հետ: Ուստական աշխարհաբանագիրը բաղադրություն է նաեւ միջինասիական ռուսական տարածաշրջանում, որի վկայությունն է Կիրգիզիայում ռազմաօդային հենակայանի ստեղծումը:

Հայ բան է արվում նաեւ սղառազինության նոր տեսակների մշակման ոլորտում: Նախագահ Պուտինը շատերին զարմացրեց իր այն հայտարարությանը, թե «գործնական իրականացման փուլում են գտնվում նաեւ ռուսական գենին նոր տեսակների նոր սերնդի գենին ստեղծման աշխատանքները, այդ թվում եւ այնողիսի, որը դասվել է սրատեղիական գենների կարգին»: Թե դա ինչ սրատեղիական գենին է առայժմ գաղտնին է, բայց փատ է, որ Ուստասաւանը ստեղծված իրադրությունում աշխուժացրել է սղառազինությունների մշակման ասղարեզում իր գործունեությունը: Այդ են վկայում տվյալներն այն մասին, որ ՌԴ-ն գիտահետազոտական եւ կոնսռուլցուրա-փորձարարական մշակումների վրա տարեկան ծախսում է մոտ 11,6 մլրդ դոլար:

Վերջերս հաջողությամբ ավարտվեցին ռուսական C-400 ՅՕՊ նոր համակարգի փորձարկումները: Հեռահար ավիացիայի զորավարժությունների ժամանակ արձակվեցին X-55 սրատեգիական թեւավոր հրթիռներ: Բայց առավել ուշագրավ են մամուլի հաղորդագրություններն այն նասին, թե Ռուսաստանը ձեռնամուխ է եղել իր ռազմածովային նավատորմի (ՈԾՆ) արդիականացմանը (հայտնի է, որ նավատորմը ստառագինության ամենաթանկ տեսակն է):

Ենթադրվում է, որ մինչեւ 2004թ. վերջը կանցկացվի այսպես կոչված «հեռավորվկիանոսյան գոտու» նավերի ավիակիրների, հածանավերի եւ այլ տիպերի ծինարարության մրցույթ: Իսկ 2010թ., ՈԾՆ գլխավոր հրամանատար, ծովակալ Վլադիմիր Կուրոյեդովի խոսքերով, «փաստուեն, ստորցյա ու վերջրյա նավատորմի ողջ համակածը, ինչու նաեւ ծովային ավիացիան անցնելու են գլխանասային, իսկ հետո նաեւ սերիական նավերի եւ իննարդիռների ծինարարությանը»: Նա ընդգծեց, որ նավատորմը դիմի լինի բազմաֆունկցիոնալ ու մոդուլյային, այսինքն զինատեսակները եւ հատուկ սարքավորումները դիտանի կլինեն ցանկացած կառուցվող նախագծի համար: Զոտեսք է լինեն նավերի, իննարդիռների տարբեր տեսակներում գոյություն ունեցող բազմաթիվ դասերը:

Ծովակալի հայտարարությունը համընկավ Հնդկաստանի ՈԾՆի համատեղ զորավարժությունների անցկացման եւ 2 սրատեգիական առոմային սուլանավերի փորձարկման նորատակով Խաղաղօվկիանոսյան նավատորմի դեմի Հնդկական օվկիանոս կատարած ռազմերի հետ: Սեւերոդվինսկում փորձարկման են դարձաւ «ըՏՇղո» միջի սրատեգիական նշանակության նորագույն հրթիռակիր առոմային սուլանավեր, որոնք հետագայում փոխարինելու են իննական «ԶՈՐԵՎ» եւ «ԺՄԱՖՑՈ» միջի սրատեգիական առոմային սուլանավերին: «ըՏՇղո» միջի սուլանավերի համար կատարվում են աշխատանքներ «ըցսՇԶՈ» միջի նոր ծովային բալիստիկ հրթիռների ստեղծման ուղղությամբ:

Ոուսաստանի ռազմական դրկտրինայում տեղ է գտել այն արտահայտությունը, թե ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը «ռազմական գործընկերներ են»: Սակայն գաղտնիք չէ, որ սեփական զինված ուժերի ամրապնդմանն ուղղված Ռուսաստանի բայլերը չեն կրում միայն դլանային բնույթ: Նոր դրկտրինան հակազդումն է այն հարատեր դատերազմական վիճակի, որ ընդգրկել է ողջ Յարավային Եվրասիան: «Սառը դատերազմի» ավարտով դայմանավորված խառնածիրից հետո առաջատար տերությունների դաշտանունակության ամրապնդումը և սվյալ իրավիճակում ուժերի հաւաքեկուման եւ դրանով միջազգային հարաբերություններում դատաճության դահլյաննան միակ միջոցն է: Ցավոք, խաղաղության աղահովման այլ ավելի արդյունավետ ու ավելի դակաս վանգավոր մեխանիզմներ դեռ ոչ ոչ չի ստեղծել:

## ԻՍԼԱՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՌՈՒՍԱՏԱՆՈՒՄ

### *Սարգիս Դարությունյան*

Ուսասատանում իսլամական գործոնի դերակատարության հարցը մեզ համար կարեւորվում է այնքանով, որքանով այդ գործոնը տեղ ունի Հայաստանի ռազմավարական դաշնակցի բաղադրական համակարգում:

Իսլամի դերը աշխարհում արագորեն աճում է: Երկրագնդի վրա բնակվում են ավելի քան 1 մլրդ մահմեդականներ: Աշխարհի 120 երկրներում գոյություն ունեն մահմեդական խուոր համայնքներ, 42-ում մահմեդականները կազմում են մեծամասնություն:

1989թ. մարդահամարի տվյալներով Ուսասատանի տարածքում այն ժամանակ բնակվում էին մոտ 12 մլն մահմեդականներ, ներկայումս, ըստ որոշ տվյալների, 145 միլիոնանոց Ուսասատանի Դաշնությունում նրանք կազմում են բնակչության 13 տոկոսը: Կոմղակս ձեռով մահմեդականները բնակվում են Պովոլժիեում, Շարավային Ուրալում եւ Հյուսիսային Կովկասում: Ըստ տարբեր գնահատականների, միայն «մեծ» Մոսկվայում նրանց թիվը անցնում է 1 մլն-ի սահմանագիծը:

Խորհրդային Միության փլուզումը եւ «Երկաթե վարագույրի» վերացումը ճանաղարի հարթեց ոչ միայն Արեւմուսից, այլեւ Արեւելից եկող գաղափարների համար: Իսլամական արմատականությունը մուտք գործեց Կովկաս եւ խորհրդային Միջին Ասիա, որտեղ արդեն իսկ գոյություն ունեին վերջինիս տարածման համար նղաստավոր դայմաններ՝ 70 տարվա ճնշամիջոցների հետեւանքը: Դեռևս ԽՍՀՄ օրեւ խորհրդային հատուկ ծառայությունները ցողանառության մեջ դրեցին «Վահարիտներ» տերմինը՝ նկատի ունենալով Միջին Ասիայում, իսկ հետո նաեւ Կովկասում իրենց գործունեությունը սկսած մահմեդական ծայրահեղ խմբավորումները: 1990-ական թթ. սկզբին Զեչնիայում սկսեց գործել «Մուսավան եղբայրներ» անունը կրող կազմակերպությունը:

Իսլամը ոռւսական քաղաքական դաշտ մտավ խորհրդային քաղաքական համակարգի փաստացի վերացումից անմիջապես հետո: Ոռւսաստանում իսլամական գործոնի քաղաքականացմանը նղաստեցին մի քանի ազդակներ: Նախ իսլամական արմատականության կենտրոններից ստացած գաղափարախոսական եւ նյութական աջակցության ժնորհիվ ոռւսաստանյան իսլամի ռազմավարական ուղղությունը դարձավ արմատականությունը: Երկրորդ իսլամը Ոռւսաստանում ստացավ ազատություն: Տեղի ունեցավ համակարգային ազատականացում, ինչը գաղափարախոսական դաշտի համար (եւ հաևկատես՝ Ոռւսաստանի դարագայում, որն ունի լուրջ խնդիրներ սեփական գոյության աշխարհայացգային հիմնավորման տեսանկյունից) նշանակում էր տարաբնույթ տեսությունների երեւան գալ: Մահմեդական բնակչության համար որդես ինքնակազմակերպման փիլիսոփայական համակարգ սկսեց աշխատել իսլամը: Աշխարհայացգային նշանակության աճը անդայման իր ազդեցությունը դեմք է ունենար սվյալ միավորի քաղաքական նախագծման համար, ինչն էլ տեղի ունեցավ Ոռւսաստանի մահմեդականների տրամադրությամբ: Երրորդ՝ ոռւսական «կենտրոնի» քաղաքական ուժերը համառուսաստանյան դայլարում դեմք է օգտագործեին ցանկացած գործոն, այդ թվում՝ իսլամական, որն էլ նղաստեց ոռւսաստանցի մահմեդականների քաղաքական ակտիվության աճին:

Որդես այդ աճի ուղղակի ցուցանիշ կարելի է բերել Ոռւսաստանում գրանցված մահմեդական համայնքների թիվը՝ 868 (1991թ.) 2494 (1996թ.) եւ 2907 (1999թ.): Իսլամի քաղաքականացումը բնութագրվեց իսլամական քաղաքական կուսակցությունների եւ ժարժումների ստեղծումով, որտեղ լուրջ դիրքեր գրանցրին մահմեդական հոգեւորականության առավել ակտիվ ներկայացուցիչները: Այդ ուժերի կողմից իսլամը սկսեց օգտագործվել նաեւ արտաքին հարաբերություններում՝ դրւս գալով «կենտրոնի» սահմանած տրամակներից եւ վերահսկողությունից: Զեջնիա, Դաղստան, Թաթրաստան եւ այլն:

Ուստասանյան բաղաբական դաշտում ներկայումս գործում են մի շարֆ բաղաբական կուսակցություններ եւ շարժումներ, որոնք ընդգծում են իրենց իսլամական բնույթը: Նրանցից են դեռևս ԽՍՀՄ օրոք ստեղծված «Վերածննդի իսլամական կուսակցությունը», 1990-ական թթ. կեսերից բավականին լայն գործունեություն ծավալած «Սուր» հասարակական շարժումը, Ուստասանի մահմեդականների միությունը, իսլամական հանձնաժողովը, 1999թ. հիմնարրված «Ռեֆահ», «Մեջիս» շարժումները եւ այլն: Անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունեն նաև բազմաթիվ տարածաշանային եւ հանրապետական բաղաբական իսլամական միավորներ:

Մահմեդականների բաղաբական ակտիվացման վերջին աճը գրանցվեց 1998–2000թթ. ընթացքում: Մահմեդական բաղաբական գործիչները հիմնադրեցին «համառուսաստանյան հասարակական-բաղաբական «Ռեֆահ» շարժումը, որը 2000թ. վերակազմավորվեց կուսակցության: «Ռեֆահը» գլխավորեց բավականին երիտասարդ բաղաբական գործիչ Արդուլ-Վահեդ Նիջազովը: Պուտինյան «Յեղինսկվոյի» հետ դաշինք կազմելով 1999թ. խորհրդարանական ընտրություններում «Ռեֆահը» կարողացավ դումա անցկացնել 5 դատգամավոր: Ընդհանուր առնամբ, ռուսական խորհրդարան անցան 12 մահմեդականներ, որն էլ առիթ հանդիսացավ դումայում մահմեդական խճակցություն ստեղծելու Նիջազովի առաջարկության համար, որը հաջողություն չունեցավ:

2001թ. նույն «Ռեֆահի» հիմքի վրա ստեղծվեց Ուստասանի Եվրասիական կուսակցությունը: Եվրասիականության գաղափարը օգտագործվում է ռուսական բաղաբական վերնախավի կողմից որդես աշխարհայացքային հիմնավորում սեփական գերիշխանությունը հետխորհրդային տարածքներում վերահաստատելու համար: Այն որուակիորեն ուղղված է միաբեն աշխարհակարգի ամերիկյան հայեցակարգի դեմ, եւ հակաարեւմտականությունը դարձավ ռուսական ներկայսերական ուժերի եւ ռուսաստանյան մահմեդականների շահերի համընկնան օբյեկտ: 2001թ.

սեղտեմբերի 11-ի դեղությանը հետո Մոսկվայի քաղաքականությունը ինտեգրվելու արեւմտյան համակարգերին, վերոհիշյալ համընկնումը մղեց հետին դլան:

Մոսկվան սղառնալիք է համարում մահմեդականների ակտիվության աճը, եւ այդ առումով ռուսաստանյան մշակութային դաշտից ցանկացած ժեղում դիտարկվում է որդես ռազմավարական մարտահրավեր (օրինակ՝ լատինատառ այբուբենի ստեղծումը Թաթարստանում): Կրեմլի քաղաքականությունը հետեւյալն է՝ ստեղծել «սեփական» մահմեդական ուժեր, ինչպես նաև արգելակել համառուսաստանյան իսլամական քաղաքական ուժերի երեւան գալը, որոնք կընկնեն տանսազգային մահմեդական կառույցների ենթակայության տակ՝ դուրս մնալով Մոսկվայի վերահսկողությունից:

1990-ական թթ. վերջին Կրեմլը ուժեղացրեց իր դայլարը «հարազա» մահմեդական ծայրահեղականության դեմ. բաներում հայտնվեցին իսլամական մի քանի տասնյակ «առաջյալներ»: Զինյալներ դատաստելու եւ ֆունդամենտալիստական բարոզություն ծավալելու համար Նաբերեժնիե Չելնի քաղաքում (Թաթարստան) փակվեց «Յալրուգ» («Աստղ») մզկիթը, որը ամենախուռներից մեկն էր Ռուսաստանում, իսկ 2000թ. Օնսկ քաղաքում Սիբիրի մահմեդականների դուրությաի ժամանակ Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության աշխատակիցների կողմից ձերբակալվեց Կուրգան քաղաքի մայր մզկիթի իմանը՝ «Ուֆահ» շարժման գործադիր կոմիտեի անդամ:

Պետք է նշել, որ մահմեդական ակտիվության աճը Ռուսաստանում ուղղակի սղառնալիք է մեր ազգային ժահերին: «Իսլամական վերածննդի» դայմաններում Ռուսաստանի մահմեդականները իրենց համարում են համաշխարհային ուժնայի մաս, որի համար աշխարհայացքային ինքնահաստառումը անցնում է իսլամի եւ ոչ իսլամի աշխարհների բաժանման միջոցով: Վերջինիս մեջ մտնում են նաև քրիստոնյա հայերը:

## ԻՍԼԱՄԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ Դավիթ Հովհաննիսյան

Վիճաբանությունները, թե արդյո՞ք իսլամը եւ ժողովրդավարական արժեները համատեղելի են եւ հնարավո՞ք է, որ իսլամական որեւէ դետություն, որը ձգտում է դահղանել Դուրանից եւ Մարզարեի սուննայից բխող եւ արժեների հսակ համակարգի վրա հիմնվող մուսուլմանական օրենքը շարիաթը, միաժամանակ որդեգրի արդի ժողովրդավարական համակարգը, շարունակվում են առայսօր:

Անցած հոկտեմբերին տեղի ունեցած Իսլամական կոնֆերանսի կազմակերպության գագաթաժողովի ընթացքում մուսուլմանական դետությունների դեկավարների ելույթները դայթող ռումբի ազդեցություն գործեցին համշխարհային հասարակայնության լայն շրջանակներում, հասկացես այն երկրներում, որոնք, հեռու գտնվելով իսլամական աշխարհի դետություններից եւ դասկերացում չունենալով նրանց հոգող հիմնահարցերի մասին, կածում էին, որ արեմտյան ժողովրդավարական սկզբունքների մերժումը, հակամաներիկյան եւ, ավելի լայն առումով՝ հակաարեմտյան գործողությունները ընդամենը մի քանի փոքրաթիվ ծայրահեղական ահարեկչական խնբերի եւ կազմակերպությունների նախաձեռնությունն են: Գագաթաժողովի նախագահող, Մալայզիայի վարչապետ Մահաթիր Մուհամադի ծրագրային ելույթը ցույց սկեց բոլորին, որ հարցը շատ ավելի խորն է, եւ խոսքը վերաբերում է ոչ թե մի քանի հարյուր ահարեկիչների, այլ երկրագնդի բնակչության մի ստվար հատկածի:

Մահաթիր Մուհամադը իր ելույթում այսպես գնահատեց իրավիճակը. «Այսօր մուսուլմանների, մեր բոլորի նկատմամբ անվստահություն եւ արհամարհամբ են արտահայտում: Մեր կրոնը դախարակում են: Մեր

Մրավայրերը դղծված են: Մեր երկրները օկուլացված են: Մեր ժողովուրդը սովամահ է արվում եւ ոչնչացվում: Մեր դետուրյուններից եւ ոչ մեկը իրականում անկախ չէ: Մենք բոլորս էլ լծի տակ ենք գտնվում եւ սիդված ենք համաձայնվել նրա հետ, թե ինչո՞ւ մենք դեմք է գործենք, ինչո՞ւ կառավարենք մեր երկրները եւ նույնիսկ ինչո՞ւ մտածենք»:

Նման իրավիճակը, ըստ Մալայզիայի վարչադեմի, չի հաճախատասխանում ուժեղի իրական դասավորությանը, բանի որ «...մենք այսօր մեկ միջիարդ երեք հարյուր միջիոն ենք: Մեր ձեռքում են գտնվում աշխարհի նավթի խուռագույն դաշտերը: Մեզ է դատկանում հսկայական հարստություն: Մենք արդեն աշխարհի կողմից մերժված այն թշվառները չենք, որ Մարզարեի օրու իսլամ ընդունեցինք: Մենք վերահսկում ենք աշխարհի 180 դետուրյուններից 50-ը»:

Իսկ ո՞րն է մուսուլմանական աշխարհի նման վիճակում հայտնվելու դաշտառը: Իր ծրագրային ելույթում զեկուցողը այսպէս է բացատրում դա. «Այն ժամանակներում, երբ Եվրոպացիները դեռ հետամնաց էին, ուսյալ մուսուլմանորը արդեն ստեղծել էին իրենց մեծ քաղաքակրթությունը, որը հարգված էր, հզոր եւ կարող էր մրցել աշխարհի հետ ու դաշտամեջ մուսուլմանական ժողովրդին արտաքին ազրեսիայից: Սակայն եկան իսլամի նոր մեկնաբաններ, որոնք համարեցին, որ գիտությունը դա միայն իսլամական աստվածաբանությունն է... ինդուատիհալ հեղափոխությունը մուսուլմանները բաց թողեցին ամբողջովին, եւ անկումը շարունակվեց: Ֆրանսիացիների եւ բրիտանացիների ջաններով կործանվեց վերջին համաշխարհային մուսուլմանական ժերությունը Օսմանյան կայսրությունը, եւ նրան փոխարինելու եկան Եվրոպական գաղութները, որոնք անկախացան միայն Եւկրորդ համաշխարհային դաշտազմից հետո: Բացի նոր դետական կազմավորումներից, մենք փոխ առանք Արեւմուստից նաև նրա ժողովրդակարական համակարգը: Այն նույնութեան բաժանեց մեզ տարբեր քաղաքական կուսակցությունների եւ խմբերի, որոնցից մի քանիսը սկսեցին սեփականացնել

իսլամը մերժելով այն մյուսների համար...»:

Այստիսով, Մալայզիայի վարչադեմք իսլամական աշխարհի ճահճացման եւ հետամնացության երկու հիմնական դասար է առանձնացնում. գիտության անտեսումը եւ արեմյան ազեցությունը: Յարկ է նշել, որ նման կարծիքը բաժանում են գագաթաժողովին ելույթ ունեցած դետությունների դեկավարներից շատերը: Եվ կարելի է վստահորեն ասել, որ Մալայզիայի վարչադեմք ելույթն արտահայտել է մուսուլմանների ճնշող մեծամասնության կարծիքը:

Թվում է, որ հաւաքաղես այս կարեւոր գագաթաժողովից հետո ԱՄՍ դեկավարությունը քայլեր ձեռնարկեց իր հարաբերությունները նուսուլմանական ժողովուրդների հետ ըսկելու համար: Չայլերից մի քանիսը PR-ային բնույթ էին կրում. Սովորական տեսական դեղարտամնություն ռամադանի ընթացքում տրված իֆտարներ (իսլամի դրույթների համաձայն օրվա դասին հետևող ճաշկերույթ), իսլամ դպրության ամերիկյան քաղաքացիների կազմակերպությունների դեկավարների հետ հանդիպումներ եւ այլն: Սակայն նոյեմբերի 6-ին, ժողովրդավարության ազգային հիմնադրամի 20-ամյակին նախագահ Բուտիշ ելույթը ունի ոչ այնքան բարզական, որքան ծրագրային բնույթ, որի մեջ շարադրված են նրա վարչակազմի տեսակետները այս հիմնահարցի վերաբերյալ: Թվում է, թե այս ճառը ուղղակի դատասխան է իսլամական կոնֆերանս կազմակերպության գագաթաժողովում արտահայտած դիրքորոշումներին:

Իր ելույթի սկզբում Բուտիշ հիեց նախագահ Ռեյգանի 1982թ. հայտնի վեստմինստերյան ճառը, երբ նա հայտարարեց, որ մարդկության դատմության բեկումնային դահն է հասել եւ որ խորհրդային կոմունիզմը դարտություն է կրում այն դատարանով, որ չի հարգում իր սեփական ժողովրդին նրա ստեղծագործական ունակությունները, տաղանդը եւ իրավունքները: Ռեյգանն ասաց այդ ելույթում, որ ազատությունը այնպիսի խթան է ստացել, որ այն անհնար է այլեւս կանգնեցնել եւ այն հաղթականորեն քայլելու է

ամբողջ աշխարհով:

«Մեծագույն ժամանակակից դեմքի ժողովրդավարություն, որի մասին ասել էր նախագահ Ռեյգանը, - ժարուհակում է Բոււը, - արդեն թափ է հավաքել: 70-ականների սկզբին աշխարհում կար մոտ 40 ժողովրդավարական դեմություն... XX դարի վերջին դրանց թիվը հասել էր արդեն 120-ի... Մեկ սերնդի կյանքից մի փոքր ավելի ժամանակահատվածում մենք դաշտանու վկան ժողովրդավարության 2500 տարիների դաւանության ընթացքում ազատության ամենաարագ հաղթաբերթին: Աղագայի դաւանաբանները դեռ կրացարեն ինչու այդպես դաշտեց: Սակայն մենք արդեն իսկ գիտենք որոշ դաշտաներ, որոնք նրան նշելու են: Պատահական չեն, որ այս ժողովրդավարությունների սեղծումը համընկավ աշխարհի ամենաազդեցիկ երկրում ժողովրդավարության գոյության հետ»: Նախագահ Բոււը ընդգծում է այն դերը, որը Միացյալ Նահանգները խաղաց աշխարհի տարբեր տարածաշրջաններում գտնվող երկրներում ժողովրդավարական արժեքների արմատականացման գործում եւ այն օրկանները, որ կրել են ամերիկացիները աշխարհում ազատություն տարածելու նոյանակով: «Միայն մեր երկրի եւ նրա դաշնակիցների հետևողականության եւ համառության ընորհիվ Գերմանիան եւ ճաղոնիան վերածվեցին ժողովրդավարական դեմությունների եւ դադարեցին մնացած աշխարհի համար վսանգ ներկայացնել: Խորհրդային Միության հետ գլորբալ միջուկային հակամարտությունը խաղաղ ելք ունեցավ: Եվրոպայի երկրները ընթանում են միավորվելու ձանապարհով, այլ ոչ թե առձակատման եւ ցեղասպանության»:

Նախագահն իր ելույթում վսահեցրեց, որ Միջին Արեւելյում ժողովրդավարության հաստատումը մոտակա տասնամյակների ընթացքում մնալու է Միացյալ Նահանգների արտաքին խաղականության առաջնահերթ խնդիրներից մեկը, եւ այս տարածաշրջանի սրտում ազատ իրավի ստեղծումը այս իմաստով բեկումնային կդառնա: Նա սույն է համարում բոլոր այն կարծիքները, որոնք դնդում են,

թե իսլամը եւ ժողովրդավարությունը անհամատեղելի են եւ վկայակոչում է այն դետությունների օրինակը, որոնք լուրջ հաջողությունների են հասել ժողովրդականացման ճանապարհին որպես օրինակ բերելով Թուրքիան, Ինդոնեզիան, Սենեգալը, Ալբանիան, Նիգերը եւ Սիերա Լեոնեն: «Աշխարհի մուտքանմերի կեսից ավելին աղրում է ազատության եւ ժողովրդավարական սահմանադրական կարգերի դայմանմերում: Նրանք հաջողությամբ կառուցում են ժողովրդավարական հասարակություններ, բայց ոչ թե հակառակ իրենց հավաքի, այլ նրա ընորհիվ: Այն կրոնը, որը մարդուց դահանջում է անձնական բարոյական դատասխանատվություն եւ խրախուսում է նրա անձնական կաղը Բարձրյալի հետ, ամբողջովին համատեղելի է ինքնակառավարման սկզբունքի հիմքում ընկած իրավունքների եւ դարտավանությունների հետ»:

Այն իրողությունը, որ մուտքանական երկրների մեծ մասը գտնվում է ծայրահեղ հետամնացության եւ աղբատության դայմանմերում, նախագահ Բոււը բացատրում է ոչ թե նշակույթի կամ կրոնի առանձնահատկություններով, այլ «ֆաղաքական եւ սնտեսական հայեցակարգերի ոչ էֆեկտիվ լինելով», ինչորես նաեւ «ազատության դեֆիցիտով»:

Միացյալ Նահանգների նախագահը իր այս ելույթում եւս մեկ կարեւոր միտք է ընդգծում: Պատասխանելով այն բազմաթիվ ժաղաքական գործիչներին եւ վերլուծաբաններին, որոնք բննադատում են ամերիկյան ժաղաքականությունը սեփական արժեքների համակարգը այլ նշակութային համակարգերին դարտարելու համար, նա հայտարարեց, որ «մոդեռնիզմացումը նույնը չէ, ինչ որ արեմականացումը: Միջին Արեւելի ներկայացուցչական մարմինները կարտահայտեն իրենց սեփական նշակույթը: Նրանք չեն լինի, եւ դարտավոր էլ չեն, մեր նման լինել: Ժողովրդավարական երկրները կարող են լինել սահմանադրական միաբետություններ, դաշնակցային հանրադետություններ կամ խորհրդարանական համակարգեր»:

Սակայն, ըստ նրա, կան որոշակի սկզբունքներ, որոնք ընդհանուր են բոլոր հաջողված հասարակությունների համար: Այդ հասարակությունները սահմանափակում են դետության եւ գինվորականների իշխանությունը, որդեսզի կառավարությունները արտահայտեն ոչ թե վերնախավի, այլ ժողովրդի կամքը: Դրանք դաշտավայրեն են ազատությունը օրենքի հետևողական եւ անկողմնակալ կիրառմամբ եւ թույլ չեն տալիս, որ այն օգտագործվի միայն բաղաբական ընդուհմախոսներին դաշտելու համար: Դաջողված հասարակությունները դայմաններ են ստեղծում առողջ բաղաբական ինստիտուտների ձեւավորման համար բաղաբական կուսակցությունների, անկախ լրատվության, արհմիությունների եւ այլն: Նրանք մասնավորեցնում են սննդեսությունը եւ աղահովում են սեփականության իրավունքը, դաշտում են կառառակերությունը եւ կոռուպցիան, զարգացնում են կրթության եւ առողջաղահության համակարգերը: Այդ բոլոր սկզբունքները Միացյալ Նահանգները եւ նրա դաշնակիցները, ինչպես ասաց նախագահ Բոււշը, ներկայումս փորձում են արմատականացնել Աֆղանստանում եւ Իրանում: «Իրավյան դեմոկրատիան,- հայտարարեց նա, - կիասնի հաջողության, եւ այդ հաջողությունը Դամասկոսից Թեհրան կտարածի լուրն այն մասին, որ ազատությունը կարող է լինել յուրաքանչյուր երկրի աղաքան»:

Նախագահ Բոււշի այս ելույթի դաթոսը հասկանալի է. նա խնդիր ունի, եւ այդ խնդիրն այն է, որ նա ստիղված է բացատրել եւ դրույագանդել իր վարչակազմի վարած բաղաբականությունը ոչ միայն դրսի համար, այլեւ Միացյալ Նահանգների ներսում, բանի որ ամերիկյան հասարակության մեջ շատերին անհասկանալի են Վաշինգտոնի ծրագրերը Միջին Արեւելքում եւ նրա վարդագիծը իսլամական աշխարհի հետ հարաբերություններում, ինչն արդեն իսկ հանգեցրել է հակամերիկյան տրամադրությունների կտրուկ աճին:

Միաժամանակ նախագահ Բոււշը այս ելույթով դիմում

է խլամական աշխարհի ժողովուրդներին ձգտելով համոզել նրանց, որ ամերիկյան բաղաբականությունը ուղղված չէ իրենց դեմ, այլ միայն այն վարչակարգերի, որոնք չեն համապատասխանում ժողովրդավարական սանդարձներին: Ի դեպ, ԱՄՍ նախագահը փորձում է խուսափել այդ արտահայտությունից օգտագործելով «հաջողած հասարակությունների համար ընդհանուր սկզբունքներ» ձեւակերպումը:

Ելույթում կա եւս մեկ կարեւոր ակնարկ. մոդեռնիզմացումը չի նշանակում արեւմտականացում, եւ միաբետությունները կարող են դահլիճներ, սակայն դրա համար նրանք դեմք է դարձնան սահմանադրական: Արդյո՞ք այս ակնարկը դեմք է անհանգստացնի Սառույան Արարիայի, Բահրեյնի եւ Ծոցի մյուս երկրների միաբետներին, թեև Բուօն իր ճառում նշում է այն ձեռքբերումները, որոնց այս երկրները հասել են ժողովրդավարացման ժանապարհին:

Ելույթը դարունակում է նաեւ անթարույց սղառնալիք իրանի եւ Սիրիայի հասցեին: Այս երկու երկրները ընտրվել են որպես հակածողովրդավարության եւ «չհաջողած հասարակությունների» օրինակներ, ինչը, ամենայն հավանականությամբ, կամրադնի մուսուլմանական դետությունների առաջնորդների այն կարծիքը, որ «*հրեաները ուրիշի ձեռքերով կառավարում են աշխարհը եւ սիրում են ուրիշներին դատերազմել եւ մեռնել նրանց համար*» (նեցրերումը վարչապետ Մուհամադի ելույթից է): Սիրիան եւ Իրանը իսլամական աշխարհում ընկալվում են որպես իւրայելի դեմ տարվող դատերազմի առաջամարտիկներ, ուստի նման սղառնալիքները Միացյալ Նահանգների կողմից կարող են հակառակ ազդեցությունը ունենալ:

Դարկ է նշել, որ վարչապետ Մուհամադի ելույթը լուրջ բնադրատության է արժանացել իսլամական արմատական կազմակերպությունների կողմից իսլամի թօնամիների հետ զինադադար կնքելու եւ բանակցություններ վարելու առաջարկությունների համար: Նրանց կարծիքով, բանակցություններն անհնար են, քանի որ հրեաների կողմից

դեկապարվող արեւմտյան դետությունները եւ հատկացես Միացյալ Նահանգները մի նոյատակ են հետաղնդում ոչնչացնել նուսովմանական բաղաբակրությունը: Բացի այդ, բանակցություններ վարել անհավատների հետ նշանակում է դավաճանել կրոնի սկզբունքներին, ինչն անընդունելի է:

Անընդունելի է նաեւ կառուցել դետությունը, հասարակությունը իսլամի օրենքներին հակառակ, իսկ նախազահ Բուժի ելույթում հնչած սկզբունքները չեն համադատասխանում ումնայի կառուցման եւ գործունեության հիմքում ընկած սրբազն օրենքին: Եվ ընդհանրամես, «Արանի (hrեաները - Դ.Յ.) հորինել եւ հաջողությամբ ներդրել են սոցիալիզմը, համայնավարությունը, մարդու իրավունքները եւ ժողովրդավարությունը, որդեսզի ազատվեն հետաղնդումներից, որդեսզի ըմբուխնեն բոլորի հետ հավասար իրավունքները: Դրանց օգնությամբ են Արանի հսկողություն հաստատել աշխարհի ամենահզոր երկրների վրա» (մեջբերումը վաշչառես Մոլիամադի ելույթից է): Ուստի ժողովրդավարությունը նույնան վասնգավոր եւ վնասակար է իսլամական աշխարհի ժողովուրդների համար, որքան սոցիալիզմը, կոմոնիզմը եւ մարդու իրավունքները:

Հավատացյալ նուսովմանների կարծիքով, այն ումնան, որը ստեղծվել էր Մեղինայում VII դարում Ալլահի կամքի եւ խոսի համաձայն եւ Ալլահի Մարգարեի դեկավարությամբ, ներկայացնում է ամենաարդար եւ կատարյալ կառուց, որը դեմք է վերականգնել իր մարդության մեջ: Այլ սկզբունքներ դետություն կամ հասարակություն կառուցելու համար, դեմք չեն եւ նույնիսկ վտանգավոր են, քանի որ դրանի հակասում են Ալլահի կամքին: Այս դատկերացումները համընդհանուր են եւ չեն դատկանում ծայրահեղականներին կամ արմատականներին:

Միացյալ Նահանգների նախազահ Զորջ Բուժի եւ Սալայգիայի վաշչառես Մահաթիր Մոլիամադի ելույթների համեմատությունը եւս մեկ անգամ վկայում է, որ մեր դարաւորանի գլխավոր հակամարտության հիմնական

ուժերը շատ հեռու են իրար հասկանալուց, քանի որ նույն բառերով նրանք բոլորովին տարբեր իրողությունների մասին են խոսում, իսկ սկզբունքները, որոնց բոլորն էլ կարող են հաճածայն լինել, իրականում բացաձակադես տարբեր իմաստ են ստանում: Դարցն այն է, որ կողմերը հիմնվում են բոլորովին տարբեր արժեքային հաճակարգերի վրա: Եկանցողեւը նրանց միջեւ հնարավոր կլինի վերացնել միայն այն դեմքում, երբ նրանք ձգտեն իրար հասկանալ, ինչը հնարավոր է միայն նույնանման գեուսրատեգիական կամ աշխարհաբաղական ծրագրերի առկայության դեմքում:

## ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՊԱՍՈՆՏԱԺՈՒՄԸ

Այս տարվա սեպտեմբերին հունական Հռոդոս կղզում կայացավ «Քաղաքակրթությունների Երկխոսություն» թեմայով միջազգային ֆորում, որին մասնակցում էին գիտականներ եւ հասարակական գործիչներ ավելի քան 30 Երկրներից: Ամերիկացիների եւ բրիտանացիների կողմից արհամարիված այս ֆորումը վերածվեց համաշխարհային կարգի վրա գլոբալիզացիոն դրցեսների եւ ԱՄՆ միակողմանի գործողությունների կործանիչ ազդեցության մասին մենախոսության: Ֆորումին մասնակցում էր նաև Ռուսաստանի դեսական հումանիտար համալսարանի դրույտը՝ **Անդրեյ Ֆուրտովը**, որի սկած հարցազրույցը «ԱՄԵՐԻԿԱ» հանդեսին ստորև ներկայացնում ենք կրճատումներով:

Դարձ. Արեւմուտքում հանկարծ սկսեցին խոսել «Պատմության ավարտի», «Քաղաքակրթությունների բախնան» մասին: Ինչ չափով են այդ գաղափարները կարգված իրականության հետ:

Պատ. Ես գտնում եմ, որ «Քաղաքակրթությունների բախնան» մասին դրույթը կեղծ է: Քաղաքակրթությունները չեն կարող բախվել: Տերենսիս Ֆուկույամայի «Պատմության ավարտը» եւ Սամուել Ջանինգսոնի «Քաղաքակրթությունների բախում» գրերը սովորական ինտեկտուալ վիրուսներ են, որոնք ժեղուած են ուսադրությունը լուրջ եւ իրական խնդիրներից: Ջանինգսոնն, անշուշտ, շատ հետաքրի անձնավորություն է: Նա հայտնի է դեռեւ վիենամական դատերազմից որպես հակադարձական մարտավարության գիտակ: Այն, որ համարես այդդիսի մասնագետ-գործադրողն է գրել այս գիրքը, նշանակում է դա է ժամանակի դահանջը: Բայց Ջանինգսոնը ոչ մի նոր բան չի հնարել: Նա Վերցրել է Արեւմուտքի եւ իսլամի քաղաքակրթությունների բախնան մասին Հոմեյնիի թեզիսը եւ այն ծավալել այլ ուղղությամբ:

Հանտիմգտոնի սխեման որու իմաստով դարձարջանի իրական առճակատումները թափնելու կամ դրանք դարձարջես այլ բողի տակ ներկայացնելու փորձ է: Իրականում բախումներն այլ բնույթի են եւ վերաբերվում են գլոբալ աշխարհին: Ես կարծում եմ, որ ճշնարտությանն ավելի նույնական է այս պատճենը:

Օրինակ, ճաղոնացի մենեցեր Ջենիթի Օմայեն, որին կոչում են Սիստ Շազմավարություն, գրել է «Աշխարհն առանց սահմանների» եւ «Ազգային դետության անկումը» գրերը: Նա դնդում է, որ «տարածարջանային սնտեսությունը» Բրոդելի ու Վալերությանի «համաշխարհային սնտեսության» հակադրությունն է: Տարածարջանային սնտեսությունում դեմք է լինի 5 մլն-ից ոչ դակաս բնակչություն, այլապես նրա արդյունավետությունը հնարավոր չի լինի առահովել, բայց ոչ 30 մլն-ից ավելի, որովհետեւ շատ կիխնեն չխպորները: Գլոբալացումն իրենից ներկայացնում է 200-300 գերզարգացած հանգույցներ, որտեղ կենտրոնացվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները, կառուցանալիք: Այս հանգույցները նյութապես եւ գործնականորեն փոխկադարձ են: Մնացած բոլորն անտեսված ու հանված են:

*Դարձ. Խսկ դուք ինչողե՞ս եթ սահմանում գլոբալացումը:*

*Պատ.* Գլոբալացումը աշխարհի բնակչության 80%-ին սնտեսական գործառույթներից հեռացնելու գործընթաց է: Գլոբալ աշխարհը հողագոնի բնակչության 20%-ի կազմի համակարգ է: Այս երեսութքը բացատրելու համար լին սոցիոլոգ Զիգմոնդ Ֆաումանը հորինել է գլոբալներ եւ լոկալներ եզրերը: Գլոբալներն աղրում են գլոբալ «վերերկրյա» աշխարհում տեղաշարժվելով, օրինակ, Hilton հյուրանոցային ցանցով որմես գործարաններ, բաղադրական գործիչներ, վատագույն դեմքում որմես զբոսաշրջիկներ: Լոկալները լինում են իրենց բնակավայրերը կամ որմես գաղթականներ, կամ որմես տարագիրներ օրինական կամ անօրինական, բայց ցանկացած դեմքում էլ մի «լոկուս»-ից ընկնում են մեկ ուրիշը: Լոկալ մարդն այդդիսին մնում է ընդմիւս:

Նոր դարաշրջանի եւս մեկ արդյունմ «գործ գոտիները»: Այս եզրը եկել է ռադիոլեկտրոնիկայից, ինչը նօանակում է տարածության մաս, որը դուրս է ռադիոլոկատորների հսկողությունից: «Գործ գոտիներում» լեռտությունը համարյա ամբողջովին կորցրել է հսկողությունը, իշխանությունն այնտեղ սեփականացված է կամ կլանների, կամ էլ հանցագործ խճավորումների առավել հաճախ նարկոկարտելների, անջատողական եւ դարտիզանական ժարժումների կողմից: «Գործ գոտիներ» կարող են լինել նաեւ բաղադրի առանձին շրջաններ (օրինակ Հարավային Բրոնսը Նյու Յորքում): Այս բոլորը գլոբալացվող աշխարհը դարձնում են առավել անհամաչափ: Դա այն միատարր եւ ազատական աշխարհը չէ, որ նկարագրում են Ժակ Աթալը «Նա կգա» եւ Ֆրենսիս Ֆուկույաման «Պատմության ավարտը» գրերում:

Դրա հետ մեկտեղ, ինչպես տղոյում է Պատրիկ Բյութեննը, իրավիճակը բարդանում է նաեւ հենց արեւմտյան բաղադրակրության ներսում՝ Արեւմուտի եւ Պուտարեւմուտի միջեւ դայլարով: Խոսքն այն մասին է, որ արեւմտյան աշխարհում արդեն ձեւավորվում են անկլավներ (ԱՄՆ-ում դա մեխիկական անկլավն է, Կենտրոնական Եվրոպայում թուրքականը, Ֆրանսիայում արաբականը եւ աֆրիկյանը): Այդ մասին գրեց նաեւ Թոյնբին, բայց նրա վրա ծիծաղեցին 60-ականների ազատականներն ու մարտիսները: Նա խոսում էր այսպես կոչված հաճակարգը խարխլող ներին դրուեարիատի մասին: Այդ ներին դրուեարիատն այժմ առկա է ողջ արեւմտյան աշխարհի կորիզում: Դրանք եկվուներ են Ասիայից, Աֆրիկայից ու Լատինական Ամերիկայից: Այդ դրուեարիատը չունի այն իրավունքները, ինչ սպիտակամորթ բնակչությունը, սակայն նրա մոտ գոյություն ունի կազմակերպության սեփական ձեւը կրոնի, օրինակ իսլամի տեսով: Քիսուն տարի հետո հարցն ավելի սուր դրված կլինի: Մի կողմում կլինի ծերացած սպիտակամորթ բնակչությունը, իսկ մյուս կողմում երիտասարդ էխոմեխիկական, էխոաֆրիկյան եւ այլ ժողովի բնակչություն, որը մնալու է աղքատ: Սա դայթուցիկ է: Այդ

իմաստով Եվրոպան անցել է իր շրջման կետը. այստեղ ոչինչ անել չես կարող: Սովորակ ընտրախավը երկու դար կառավարել է աշխարհը, եւ նրա ժամանակն անցնում է:

*Դարգ.* Խոսելով արեւմտյան միջին խավի մասին հաճախ են հիշատակում 70-ական թվականները: Ինչո՞ւ հատկապես այդ ժամանակահատվածը:

*Դաս.* 20-րդ դարում եղավ մի ցնցող ժամանակաշրջան, որը բոլորին զցեց մոլորության մեջ: Դա 1945-1975թ. ընկած ժամանակահատվածն է, երբ բարենպաստ և նեսական դայմաններ էին, երբ Արեւմուսքը հարկադրված էր խաղաղեցնել իր միջին խավին եւ բանվոր դասակարգին, որդեսզի, աստված չաներ, նրանք վվեարկեին սոցիալիստների եւ կոմունիստների օգտին (բանզի կար ԽՍՇՍ, որն իրեն զգացնել էր տալիս): Սոցիալական գիշումների հետեւանքը եղավ այսպես կոչված «համբնդիհանուր սոցիալական աղահովության դետության» ձեւափորումը: Եկամուտների 30-50%-ը հարկերի տեսքով դուրս էր հանվում շրջանառությունից ու վերաբաժանվում: Արդյունքում առաջացավ «սոցիալիստական բուրժուազիա», եւ միջին դասն ընդարձակվեց այն մարդկանց հաշվին, որոնք բուրժուազիայից չէին, բայց կարող էին իրենց թույլ տալ բուրժուական աղբելակերպ: Բայց 70-ականների սկզբին ամեն ինչ խորտակվեց: Պայթեց նավթային ճգնաժամը, ԱՄՆ-ը հրաժարվեց «ոսկե ստանդարտից», սկսվեց գիտատեխնիկական հեղափոխությունը: ԽՍՇՍ-ը Վիետնամում ԱՄՆ դեմ ջախջախիչ հաղթանակ տարավ: Կայացավ Չելսինկյան խորհրդակցությունը, որում Արեւմուսքն ընդունեց այն, ինչ կատարվել էր Եվրոպայում 1945թ.: Չենց այդ ժամանակ էլ տաղալվեց ԱՄՆ ավանդական իշխող խավը, որը ձեւափորվել էր նրա արեւելյան ափին ու կառավարում էր 170 տարի: 1975թ. հետո ԱՄՆ բոլոր նախագահները կամ երկիր արեւմտյան մասից են, կամ հարավային. այսինքն իշխանության եկան այն խմբերը, որոնք սերունեն կաղված էին գլոբալ համակարգի հետ: Ամերիկան դարձավ «գլոբալ»: Օգտագործելով գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները Արեւմուսքը զարկ սկսեց գլոբալացման

գործընթացներին, որոնց զոհը դարձավ նաեւ ԽՍՀՄ-ը: Մենք սովոր ենք ասել, թե խորհրդային Միությունը դարտվեց «սառը» դատերազմում, իսկ ԱՍՍ-ը հաղթեց: Ամերիկան հաղթեց, բայց հարց է առաջանում ինչորիս՝ Ամերիկան: Այն արդեն ուրիշ երկիր էր. մշակութային հեղափոխությունն անձանաչելիորեն փոխել էր նրա դեմքը:

Դարձ. Դետաֆրիր է, ընդհանրապես ինչոքն հնարավոր եղավ մշակութային հեղափոխությունը, ո՞վ այն նախաձեռնեց:

Պատ. Անտոնիո Գրամչին 30-ականներին հասկացավ, որ Արեմուտիսին անհնար է խորակել բաղաբական միջոցներով եւ առաջարեց «մշակութային գերիշխանության» հայեցակարգը: Նա աղացուցեց, որ բուրժուազիան իր դիրքերը գրավում է նաեւ մշակույթի օգնությամբ, ինչն ընդունակ է իր ստեռտիմերը դարձարել ուրիշներին: Այդ իսկ դատարկով Գրամչին դմում էր, թե բուրժուազիային դեմք է հաղթել մշակույթի ասղարեզում: Նրա գաղափարները հետո զարգացրեց ֆրանկուրտյան դդրոցը ի դեմս Մարկուզեի եւ այլոց: Դիմերի հշխանության գալուց հետո նրանցից շատերը սեղափոխվեցին Ամերիկա: 50 տարիների ընթացքում նրանք ամերիկյան երիտասարդության գլուխն էին նացնում այն, որ արեմույն մշակույթը վասն է, դետությունը նույնացնելու: Անհատականությունը լավ է: Դարձավոր է հակամմշակույթը:

1968թ. ամեն ինչ դայթեց: Առաջացավ հակամմշակույթը, որում բննադատվում էր դետության դերը եւ դնդվում, թե բանվոր դասակարգն իր դարն աղրել է: Այս իրադարձություններում շատ կարենու էր անհատական շահույթ ստանալու շարժառիթը. այն իրականացվում էր ընու-քիզնեսում, թմրանյութերի վաճառքում եւ այլն: Դա երիտասարդության համար ստանալու հասարակություն մտնելու հեղափոխական ճանաղարի էր: 20 տարի անց ներկայի երաշխականի գաղափարներով ասղարեզ եկավ Ռեյգանը, եւ նրանք բոլորով վերակեցին նրա օգտին: Այդ սերունդն ԱՍՍ-ին վերաբերվում է ոչ թե որդես դետության, այլ որդես հետարեմույն, հետքիստոնեական

## կազմավորման:

Մենք գործ ունենք Ամերիկայի հետ որպես գլոբալ աշխարհի առավել զարգացած մասի, որտեղ ժիշտոնեական արժեքներն ամենեւին եւ չեն գերիշխում, իսկ ազատականության արժեքները հասցված են մինչեւ ինմասիստնան: Դա ի՞նչ ազատություն է, եթք չես կարող արտահայտել fn կարծիքը համասեռամոլության կամ կանանց շարժման հանդեպ: Նույնը կատարվում է նաև «Ծուկայական արմատականության» հետ: Այն ծուկան հասցնում է այնպիսի վիճակի, որ այն վերածվում է մենափրության, այսինքն իր հակադասկերին:

Իմանուիլ Վալերսթայնը նի անգամ ինձ ասաց. «Ամերիկային երթելիցե, ասենք 2020-ականներին, սղասում է իր վերակառուցումը, սակայն, ի տարբերություն խորհրդայինի, այն լինելու է ավելի արյունալի, որովհետեւ նրանում ներառված կլինեն ռասայական եւ էթնիկական խնդիրներ, որոնք գտնվում են ոչ թե համակարգի եզրին, այլ նրա ներսում»:

## ՄԵԾ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

### Ֆրենսիս Ֆուկույամա

Ամերիկացի բաղաքագետ Ֆրենսիս Ֆուկույաման երկար տարիներ աշխատել է ՌԵՆԴ կորդորացիայում, զբաղվել ազգային անվտանգության եւ բաղաքական դլանավորման խնդիրներով: Ներկայումս հանդիսանում է Ռումինիայի համալսարանի միջազգային բաղաքանության ֆակուլտետի դեկանը: Ֆուկույաման լայն ճանաչում գտավ 1989թ. հրատարակած իր «Պատմության ավարտը» աշխատությամբ: 1999թ. լույս տեսավ նրա «**ՄԵԾ Խզում**» գիրքը, որից ստորև ներկայացնում ենք նի հատված:

### **Մսխո՞ւմ է, արդյո՞ք, կառիտալիզմը սոցիալական կառիտալը**

Չաս մարդիկ համարում են, որ կառիտալիզմը վաս ազդեցություն է բողոքում բարոյականության վրա: Շուկաներն ամեն ինչ վերածում են աղրանի եւ նարդկային հարաբերությունները փոխարինում զուտ շահերով: Այս տեսանկյունից ժամանակակից կառիտալիստական հասարակությունն ավելի շատ ստառում է, քան ստեղծում սոցիալական կառիտալ: Այնոին փենոմեններ, ինչորին են Հյուս. Ամերիկայում ու Եվրոպայում հասարակական ինսիտուտների նկատմամբ վսահության նվազումը եւ, ընդհանուր առմանք, վսահության շառավղի փոփառումը, հանցագործության բարձր մակարդակն ու ազգակցական կառերի խզումը, տագնադալի միտում ունեն. այս զարգացած հանրությունները վատնում են իրենց սոցիալական կառիտալը չունենալով դրա վերաբարեման հնարավորությունը: Դատաղարժված է, արդյոք, կառիտալիստական հասարակությունը ժամանակի ընթացքում

դաշնալու նյութաղես հարուստ, սակայն բարոյացես աղքատ: Քանդո՞ւմ են, արդյոք, օռկայի ծայրահեղ անգքությունն ու անդեմությունը սոցիալական կաղերը եւ սովորեցնում, որ միայն փողը, այլ ոչ թե հանրային արժեքներն են ինչ-որ բան նշանակում: Գնո՞ւմ է, արդյոք, ժամանակակից կաղիտավիզմը դեռի սեփական բարոյականության իհմքերի խորտակում, այդոիսով դեռի կոլաջու:

Իրականում ժամանակակից տեխնոլոգիական հասարակությունները շարունակում են ունենալ սոցիալական կաղիտավի կարիքը, վասնել այն, իսկ հետո լրացնել ինչպես նախկինում: Յիմք չկա դնուելու, թե բարոյականության ոչ ձեւական նորմերի անհրաժեշտությունը կվերանա կամ ճարդիկ կդադարեն իրենց համար հաստատել բարոյական ստանդարտներ եւ փորձել հետեւել դրանց: Մարդիկ իրենց համար կստուծեն բարոյականության կանոններ մասնավորացես այն դաշտառով, որ բնությամբ այդպես են ստուծված, ինչպես նաեւ անձնական տահ հետադնդելու նղատակով: Նախկինում սոցիալական կաղիտավոր կարող էր առաջանալ այնդիսի աղբյուրներից, ինչպեսի են նվիրաբետությունը կամ դարավոր ավանդությը, որոնք ժամանակակից աշխարհում կարծես համեմատաբար թույլ են, սակայն գոյություն ունեն նաեւ այլ աղբյուրներ:

Յանրության միջոցով սոցիալական կաղիտավի վերականգնումը համայնք եւ դժվարին գործընթաց է: Շատ դեմքերում այն վերաբերվում է տարբեր սերունդների ներկայացուցիչներին եւ իր հետեւից բազմաթիվ գոհեր է թողնում, բանգի համագործակցության հիմ նորմերը վերացել են, իսկ նորերը դեռ նրանց չեն փոխարինել: **Մեծ խզումը** չի կարող իմն իրեն մեթենայորեն ցևել: Մարդիկ դեմք է գիտակցեն, որ իրենց հասարակական կյանքը վատքարացել է, որ իրենց դահվածն ինքնակործանարար է եւ որ իրենց անհրաժեշտ է սեփական հանրության նորմերի վերաստեղծման վրա (բանավեճերի, աղացույցների, մշակութային փաստակների ու նույնիսկ մշակութային

ղատերազմների միջոցով) ջանադրաբար աշխատել: Աղացույցներ կան, որ դա վերջին ժամանակներում արդեն տեղի է ունենում, իսկ մարդկության ղատմության նախորդ ժամանակաշրջանները մեզ որոշակի վստահություն են տալիս, որ նորմերի ու բարոյականության վերականգնումը հնարավոր է:

### ***Սոցիալական կառիչալը եւ ղատմությունը***

Գոյություն ունի վստահության շրջանակի ընդլայնման երկու հիմնական աղբյուր կրոնը եւ բաղաբականությունը: Արեւմուտքում թիստոներությունն առաջինը սահմանեց մարդկային արժանադապության համակողմանիության սկզբունքը, ինչը երկնից իջեցվեց երկիր ու Լուսավորության դարաշրջանում վերածվեց համադրափակ մարդկային հավասարության աշխարհիկ ուսմունքի: Այսօր մենք ղահանջում ենք բաղաբականությունից, որ այն կրի այդ նախաձեռնության համարյա ողջ ծանրությունը, եւ նա զարմանալի հաջողությանը դա իրականացնում է: Մարդկային միությունները հիմնված էին բազմազան սկզբունքների վրա, որոնց հետեւանքը եղավ վստահության նեղ շրջանակը իր մեջ ներառելով ընտանիքը, ազգականերին, տոհմը, աղանդը, կրոնը, ռասան, էթնիկությունն ու ազգային նույնությունը: Լուսավորությունն ընթանեց, որ այդ բոլոր ընդիհանությունների աղբյուները վերջին հաշվով իրացիոնալ են: Ներին բաղաբականությունն նրանք ստեղծեցին սոցիալական առձականումներ, որովհետև ոչ մի հասարակություն ցանկացած այս հատկանիշներով փաստուեն երբեք էլ գերիշխան չի եղել: Արտահին բաղաբականությունում դրանք հանգեցրին ղատերազմների, բանզի տարբեր սկզբունքներին հենված հասարակությունները միջազգային ասլարեզում միմյանց հետ մշամեն ընդիհարումների մեջ են: Միայն մարդկային արժանադապության համակողմանի ճանաչման վրա հիմնված բաղաբական կարգը բարոյական ընտրության ընդունակությունից բոլոր բոլոր մարդկանց

Էական հավասարությունը կարող է վերացնել այդ իռացիոնալությունները եւ ստեղծել ներին ու միջազգային խաղաղ կարգեր: Կամ ի հանրապետական կառավարման կարգը, ամերիկյան Անկախության հրչակագիրն ու Բիլի «իրավունքները», հեգելյան ունիվերսալ եւ հոմոգեն դետությունը, Մարդու իրավունքների հանրնիանուր հրչակագիրն ու ժամանակակից ազատական ժողովրդավարությունների հիմնական օրենքներում հիշատակված իրավունքներն այսօր հետեւում են համակողմանիության ճանաչման սկզբունքին:

Դամակողմանի ազատական այս սկզբունքների վրա կառուցված ազգերը, չնայած հաճախակի անկումներին եւ անհաջողություններին, վերջին երկու դարերի ընթացքում անսպոր կայուն դրւու եկան: Դասարակության սնտեսական զարգացմանը զուգընթաց ազատական ու ժողովրդավարական բաղադրական կարգավական կարգի ժամաբանությունը դառնում է առավել հրատադ, բանզի նրանում գոյություն ունեցող զանազան շահերի համաձայնեցունը միաժամանակ դահանջում է Ե՛ւ մասնակցություն, Ե՛ւ հավասարություն: Ժամանակակից բնագիտության զարգացումն առաջ է նղում սնտեսությունը, որն էլ, անկումներով ու սխալներով հանդերձ, բաղադրական զարգացման գործընթացներն իր հետեւից տանում է դեռի ազատական ժողովրդավարություն:

Գլխավոր խնդիրն այն է, որ սոցիալական ու բարոյական կարգն անդայմանորեն չի հետեւում բաղադրական կարգին եւ սնտեսական զարգացմանը: Գոյություն ունի երկու դաշտաւ, որոնց ընորիկվ բաղադրական կարգի մշակութային նախադրյալները չեն կարող ընդունվել որդես սվյալություն: Առաջինն այն է, որ ազատական հասարակությունները բաղադրական կարգ ձեռք են բերում բարոյական համաձայնության գնով: Միակ բարոյական դիրեկտիվը, որ հնարավոր է ազատական հանրությունում, հանդուրժողականության ու փոխադարձ հարգանքի համակողմանի դարտավորություններն են: Սկզբում այն խնդիր չէր հանդիսանում, որովհետեւ շատ ազատական

հասարակություններ, ինչդիսիք են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, մշակութային առումով սկսել են զարգանալ որպես համեմատաբար հոմոգեն։ Արանցում իշխում էր մեկ մշակութային խավ եւ մեկ կրոն։ Սակայն ժամանակի ընթացքում դրամ դարձան մշակութուեն անհամենա բազմազան։ Բնակչության նվազումը, արտագաղթի խրախուսումը եւ ազգային սահմանները, որոնք էժան տրանսպորտի ու զարգացած հաղորդակցության ուղիների ընորհիվ դարձել են բափանցիկ, ցույց են տալիս, որ շարժումը դեղի ավելի բազմազանություն ամենուրեք դահլիճանվում է։ Նույնիսկ այնդիսի երկրներ, ինչդիսին, օրինակ, Ճապոնիան է, որոնց մինչ օրս հաջողութել է դահլիճանել մշակութային ու էթնիկական հոմոգենության բավարար մակարդակ, աղագայում եւս բախվելու են նմանատիղ խնդիրների։

ԱՄՆ-ում եւ մյուս անգլիախոս ժողովրդավարություններում, ինչդես եւ Ֆրանսիայում, այդ կենտրոնախույս մշակութային ուժերն ավանդաբար փոխհատուցվում են նոր բաղաքացիական նույնության ստեղծմամբ, ինչը կաղված չէ էթնիկական դասկանելության ու կրոնի հետ։ «Ամերիկանացումը», որ ծագել է հավասարաբես եւ ժողովրդավարության բաղադական ձգտումներից, եւ անզիստոնական մշակութային ավանդույթներից, հասանելի է Միացյալ Նահանգներ արտագաղթածների բոլոր երեխաներին։ Դասական հանրապետականության ու սեփական գրական մշակութի վրա հիմնված ֆրանսիական բաղաքացիությունը նույնափ հասանելի է (ծայրահեղ դեմքում տեսականորեն) սենեգալցի սեւամորթին եւ թունիսցի արաբին, չնայած ներգաղթը Ֆրանսիայում հարուցում է անհամենա ավելի լուրջ բացասական հակագրեցություն։

Աղագայի հիմնական հարցն այն է, թե կգոյատել՞ն, արդյո՞ք, մշակութային նույնության այս համադարֆակ ձեւերը բազմամշակութականության (նույնիկուլտուրալիզմ) սկզբունքային դավանանքի գրհների տակ, որն անցնում է մշակութային բազմազանության սահմաններն ու դահլի-

ՉՈՒՄ մշակութային տարբերությունների եւ առանձնահատկությունների խրախուսում: Բարոյական մանրացումը հենց մասամբ տեղի ունեցավ այն դաշտառով, որ հանրությունը դաշտավ ավելի տարասեռ: Այս գործընթացի առավել կարեւոր դաշտառը հարաբերադաշտության (ռելյաժիվիզմ) սկզբունքային դավանանի տարածումն է. մի գաղափար, համաձայն որի արժեքների կամ նորմերի ոչ մի առանձին խումբ չի կարող կամ չղետ է գերիշխող լինի: Երբ այդուհի հարաբերադաշտությունը տարածվում է բաղադրական արժեքների վրա, որոնք վարչակարգերի հիմքն են, ազատականությունը սկսում է իմնառչնչանալ:

Երկրորդ խնդիրը, որի հետ բախվում են ազատական հասարակությունները դաշտանելով սեփական մշակութային հիմքերը, տեխնոլոգիական փոփոխությունների հարուցած վտանգն է: Սոցիալական կաղիտալու հնչ-որ հազվագյուտ ու բանկարժեքի իր չէ, որ մի անգամ ստեղծվել է կրոնի դարաւուշանում եւ հին ավանդույթի ընորհիվ ժառանգաբար փոխանցվել: Այն չունի նաեւ մշտական աղբյուր, որն այսօր մեր ժամանակակից աշխարհիկ մարդկանց կողմից անողոքաբար ոչնչացվում է: Եվ չնայած սոցիալական կաղիտալու դաշտարձնությունը լրացվում է, սակայն այդ գործընթացն ինքնաբերաբար, հետօտքամբ ու առանց ծախսերի չի ընթանում: Դենց նույն գյուտը, որ բարձրացնում է արտադրողականությունը կամ ստեղծում արդյունաբերության նոր ճյուղ, բայց այդ գործընթացն ունեցող հաճակեցությունը կամ ողջ աղբելակերպը դարձնում հնացած: Դասարակությունները, որ կանգնել են տեխնոլոգիական առաջընթացի շարժասահմուղին, սիմդված են համառողի դերում լինել, բանզի սոցիալական կանոնները կատարելագործվում են, որուսակ համադատասխանեն փոփոխվող սնտեսական դայնաներին: Մարդկի ժամանակի ընթացքում կարող են ընտելանալ փոփոխվող դայնաներին, սակայն տեխնոլոգիական փոփոխությունների արագությունը հաճախ կարող է գերազանցել սոցիալական

համակերպման արագությանը: Երբ սոցիալական կառիտալի արտադրությունն անկարող է բավարարել դահանջարկը, հասարակություններին հարկ է լինում դրա համար թանկ գին վճարել:

Հասարակությունում տեղի է ունենում զուգահեռ զարգացող երկու գործընթաց: Թաղաբական ու տնտեսական ոլորտում դատմությունը հանդիսանում է առաջադեմ եւ սահմանային, որի գագաթնակետը 20-րդ դարի վերջին եղավ ազատական ժողովրդավարությունը՝ որմես տեխնոլոգիային զարգացած հասարակությունների համար միակ կենսունակ ընտրություն: Սակայն սոցիալական ու բարոյական ոլորտում դատմությունը կաթես թե ցիկլային է, եւ սոցիալական կառիտալը բազում սերունդների ընթացքում նվազում ու աճում է: Զկա ոչինչ, որ երաշխավորի ցիկլում սոցիալական կառիտալի աճը: Հույսի միակ գրավականը կարող է լինել սոցիալական կարգի վերաստեղծմանն ուղղված՝ շատ հզոր մարդկային ներփակությունը: Վերաստեղծման այս գործընթացի հաջողությունից է կախված, թե Պատմության սլաքը ուղղված կլինի՞ վեր:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅՉՈՒԹՅԱՆ ԿՈՒԿԸ ԵՎ ՄԵՆՔ .....	1
<b>Դրանք Տեր-Արքահամյան</b> «ՀԱՅՈՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԶԱՂԱԶԱԿՐԹԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ .....	3
<b>Ռուբեն Սաֆրասյան</b> ԱՄՆ «ՀԱՍԱՍՈԼՈՐԱԿԱՅԻՆ» ՌԱԶԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՆ .....	8
<b>Մելակ Սարուխանյան</b> ԹՈՒՐԹ-ԻՍՐԱՅԵԼԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ .....	13
<b>Գագիկ Տեր-Ջարությունյան</b> ՈՈՒՍԱՍՏԱՆ. ՎԵՐԱԿԱՐԱՎ ԴԵՊԻ ԱՇԽԱՐԴԱԶԱՊԱԶԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	21
<b>Սարգիս Ջարությունյան</b> ԻՍԼԱԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՅ ՈՈՒՍԱՍՏԱՆՈՒ .....	30
<b>Դավիթ Հովհաննիսյան</b> ԻՍԼԱԱԿԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ .....	34
<b>Անդրեյ Ֆուլրով</b> ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՈՒՅ .....	43
<b>Ֆրենսիս Ֆուկույամա</b> ՄԵԾ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՈՒՆ .....	49

**Շատիկի վրա դատկերված է  
Ախթամարի վանքը**

«ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ», Հայաստանի  
Հանրապետական կուսակցության հրատարակություն  
**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**  
Երևան, 375090, Մելիք-Աղամյան 2: Դեռ. 58 04 91, 58 04 83:  
Էլ. փոստ hanrapetakan@hhk.am:  
Հիմնադիր Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը օֆսեթ, ֆորմատը  $70^X 108$  1/16:  
Պայմանական 3,25 մամուլ: Տպագործակը 1000:  
Տառատեսակը «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:  
Վկայական Օ1Մ 000176:  
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: